

ԾՐԱԳՐԵՐ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ

III ՊՐԵԿ

1. ԿՇՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
2. ԲՈՒԽԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
3. ԵՎԼՈՒԹԻՑԻՈՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ
4. ՄԱՐԴՈՒ ԱՆԱՏՈՄԻԱ ՑԵՎ ՖԻԶԻՈԼՈԳԻԱ
5. ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

gmu

ՀԽՍՀ Լուսավորության Փողովրդական Կոմիտարիատ
տարրական գպրոցների վարչություն

ԾՐԱԳՐԵՐ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ

III ՊՐԵԿ

1. ԱԵՐԴԱՇԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
2. ԲՈՒԽԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
3. ԵՎՈԼՈՒՑԻՈՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ
4. ՄԱՐԴՈՒ ԱՆԱՏՈՄԻԱ ՑԵՎ ՖԻԶԻՈԼՈԳԻԱ
5. ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ*)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԴԱ-
ՍԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (1 Ժամ)

Կենդանաբանությունը զիտություն և կենդանիների կյանքի
և կազմովյան մասին:

Տեսական կենդանաբանության ինուլուները ԽՍՀՄ-ում: Կեն-
դանիների արդյունաբերական և գյուղատնտեսական ուսումնա-
սիրությունը: Կենդանաբանության կիրառման նշանակությունը:

Հասկացողություն կենդանիների բնական դասակարգու-
թյան՝ նրանց խմբերի բաժանելու մասին, աղդակցության ու
ծաղման միասնության տեսակետից:

Կրոնական-դոգմատիկական պատկերացումը կենդանաբանու-
թյան անփոփոխելիության մասին և դրա դասակարգային եյու-
թյունը:

I. ՆԱԽԱԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԿԱՄ ՄԻԱԲԶԻՋ ՈՐԳԱՆԻՉԱՄՆԵՐ (3 Ժամ)

Ամյոքան և հողաքաղիկը վորոկս ժամանակակից միաբնիք
կենդանիների ներկայացուցիչներ: Սրանց կազմությունն ու կեն-
դական գործունեյությունը: Տնակալոր արմատուտնիներ և
սրանց գերը լեռնային ապարների առաջացման գործում: Նախա-
կենդանիների աղդեցությունը ջրամբարների վրա: Հիվանդաբեր
ամյուբանները և պայքարի միջոցները սրանց դեմ:

Կանաչ եվգլենան վորոկս որինակ կենդանական և բուսական

*) Ծրագիրը ոռուսերենից թարգմանել և Աղ. Պարզապես առաջարկությունը հայերեն թարգմանությունը խմբագրել պրոֆ. Ալ. Տեր-Պողոսյանը:



11-285489/

Համականիշների համատեղման մի որպանիզմի մեջ։ Ստորակարգ
կենդանիների և բույսերի մոռակությունը, վորպես ապացույց
նրանց ընդհանուր ծագման։

Ժամանակակից նախակենդանիները վորպես արդյունք զար-
դացման յերկարատև պլոցեսի։

Նախակենդանիների տիպի բնութագիրը։

Գործնական պարապմունք։ Նախակենդանիների դիտումը
մանրադիտակի տակ։

II. ԱՂԵԽՈՐՇԱՎՈՐՆԵՐ ՅԵՎ ՍՊՈՒՆԳՆԵՐ (2 ժամ)

Ա. Աղեխորշավորներ

Անուշահամ ջրերի հիմքան վորպես որինակ աղեխորչավոր-
ների։ Նրա մարմնի կազմության, սննման ու բազմացման առանձ-
նահատկությունները։ Հիդրայի պաշտպանողական հարմարանք-
ները և նրա սեղեներացիոն ընդունակությունը։ Աղեխորչավոր-
ներին պատկանող գաղութ կազմող ծավային կենդանիներ։ Բրա-
ծո կրուպները հողի հնակույն շերտերում։ Աղեխորչավորների ծա-
ղումը և նրանց վորպակական տարրերությունը միաբնիջ դադու-
թային ձևերից։ Հասկացողություն աղեխորչավորների տիպի
մասին։

Գործնական պարապմունքներ։ Հիդրայի դիտումը լուսպայի և
մանրադիտակի տակ։

Բ. Սպունգներ

Լնասպունգը կամ գիտասպունգը վորպես սպունգների տիպի
ներկայացուցիչներ։ Սպունգի մարմնի և կմախքի կազմությունը,
նրա սննումն ու բարձրացումը։ Ծովային սպունգներ, նրանց տըն-
տեսական ու բնական նշանակությունը։ Սպունգների տարրերու-
թյունը աղեխորչավորներից։

III. ՎՈՐԴԵՐ (4 ժամ)

Ա. Տափակ վորդեր

Կաթնային պլանարիան վորպես անուշահամ ջրերի տափակ
թարթչավոր վորդերի ներկայացուցիչ։ Պլանարիայի կազմության
և բազմացման առանձնահատկությունները։ Պլանարիան վարպես
ուղեներացիայի յերեվույթի ուսումնասիրության կլասիկ որ-
յեկտ։ Լյարդի ծծող և յերիզորգ։ Տափակ պարագիտ վորդերի
կյանքի զարգացման ցիկլը, վարակման ճանապարհներն ու պայ-
քարի միջոցները։ Պարագիտակմի աղդեցությունը նրանց կա-
ռուցվածքի պարզեցման վրա։

Բ. Կլոր վորդեր

Ասլիարիսը վարպես կլոր վորդերի ներկայացուցիչ։ Ասկա-
րիսի մարմնի արտաքին ու ներքին կազմությունը և նրա բազ-
մացումը։

Տրիխինան և պայքարի միջները նրա գեմ։
Գործնական աշխատանք։ Ասկարիսի ձվերի ցուցադրումը
մանրադիտակի տակ։

Գ. Ողակավոր վորդեր

Անձրեավորդը վորպես որինակ ողակավոր վորդերի։ Անձ-
րեավորդի մարմնի ներքին և արտաքին կազմությունը։ Անձրե-
ավորդերի սննդառությունը և նրանց նշանակությունը հողա-
սողջացման պրոցեսում։ Անձրեավորդի բազմացման առանձնա-
հատկությունները։ Հատվածավորության (մետամերիայի) և
սեղեներացիայի յերեվույթներն անձրեավորդերի մոտ։ Թարթ-
չավոր աղատ ապրող տափակ վարդերի ծագումը աղեխորչավոր-
ներից։

Գործնական պարապմունք։ Անձրեավորդի հերձումը։

Ա. Փափկամորքներ

Անատամը վորպես որինակ թերթախորիկ փափկամորթի : Անատամի կազմությունը, կենսաբանությունը և բազմացումը : Ուստեղի փափկամորթներ : Վորոշ փափկամորթների տեխնիկան ոգտագործումը : Գյուղատնտեսության վնասառուները (փորոտանի փափկամորթներ, լորտնուկներ) և աղայքարի միջոցները նյանց դեմ :

Բրածո գլխոտանի փափկամորթներ : Փափկամորթների տիպի ընդհանուր բնութագիրը և նրանց վորդերի հետ ունեցած ելուցոցիոն կապի նշանները :

«Ծովի հատակը» կինոնկարի ցուցադրում :

Բ. Փշամորքներ

Ծովաստղը վորպես փշամորթների տիպի ներկայացուցիչ : Ծովաստղի կազմության առանձնահատկությունները՝ կապված նրա ծովի հատակում ունեցած լյանքի հետ : Նրա բազմացումը : Փշամորթների տարածվածությունը հողի հնագարյան շերտերում : Փշամորթների տիպի ընդհանուր բնութագիրը :

V. ՀՈԴՎԱԾՈՏԱՆԻՆԵՐ (8 Ժամ)

Հոդվածոտանիների տիպի առանձին դասերի ուրվագիծը :

Գետի խեցքիներ վորպես որինակ հոդվածոտանիների տիպի և խեցքետնակերպերի դասի : Նրա արտաքին ու ներքին կազմությունը և կենսաբանությունը : Ծովային բարձրակարգ խեցքետիններ և նրանց արհեստագործական ու տնտեսական նշանակությունը : Ստորակարգ խեցքորթների կենսաբանական նշանակությունը : Հնագույն բրածո խեցքորթները :

Սարդակերպներ . Խաչսարդ և այլն թունակոր սարդակերպներ (կարակուրա, մորմ, կարիճ) : Նրանց համառոտ կենսաբանությունը :

Բազմոտանիներ . Հազարվոտնուկը և ուրիշները : Հնագույն բազմոտանիների կապը մի կողմից բարձրակարգ վորդերի և մյուս կողմից միջատների հետ :

Միջատները վորպես հոդվածոտանիների բարձրագույն դասը : Միջատների ձեւերի բազմազանությունը և սրա նշանակությունը բնության ընդհանուր տնտեսության և մարդկային պրակտիկայի մեջ :

Սև խավարասերի, վորպես միջատների ներկայացուցչի, մարմնի արտաքին ու ներքին կազմությունը : Սև խավարասերի և մյուս միջատների բազմացումն ու զարգացումը : Ուղղաթեկ վնասառուներ (մորեխ, ծղրիա) :

Մայիսյան բղեղը և նրա կենսաբանությունը : Մայիսյան բղեղի և նրա թրթուրի պատճառած վնասները և պայքարի միջոցները նրա դեմ : Բղեղների կարգի վնասակար ու ոգտակար միջատները (գնայուն բղեղներ, ջրասեր բղեղներ, աղբաբղեղներ, զատիկ, յերկարակնձիթ բղեղներ, գերեզմանափոր բղեղներ, տերեակեր բղեղներ, լողացող բղեղներ և այլն) : Սեռային դիմորֆիզը :

Թեփաթեվեր, նրանց համառոտ բնութագիրը և կենսաբանությունը : Անտառի, դաշտի բանջարանցի թեփաթե վնասառուները և պայքարի միջոցները նրանց դեմ :

Շերամը վորպես որինակ արհեստագործական ողտակար միջատի : Սեղոնային գիմորֆիզմ, պաշտպանողական գունավորում և միմիկը :

Մեղու . նրա կազմության առանձնահատկությունները : Մեղուների բուծումը, վորպես արհեստագործական միջատների : Միջատների և այլ թաղանթաթեների (մըջյուններ, կրետներ, բռուեր) բազմաձևությունը (պոլիմորֆիզմը) : Հասկացողություն միջատների բնազդի մասին :

Մենյակի ձանձ, նրա կազմությունն ու կենսաբանությունը : Ձանձների պատճառած վնասները և պայքարի միջոցները նրանց դեմ : Ցերկթեանիների այլ ներկայացուցիչները, վորպես հիվանդություններ տարածողներ (սիրիբախտ, մալարիա, լուծ, դիղինակերիա, քնահիվանդություն և այլն) : Հոդվածակնձիթ ձպուններ, միորյակներ, լվեր և սրանց կենսաբանությունը :

Հողվածոտանիների տիպի ընդհանուր բնութագիրը։ Առանձին դասերի ծագումը և նրանց փոխադարձ կալլը։

Գործնական պարապմունքների Մայիսյան բզեզի անդամահատումը և արևելյան խավարասերի (տարականի) կամ գետի խեցգետնի հերձումը։

VI. ԼԱՐԱՎԱՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ— ԶԿՆԵՐ (5 ժամ)

Հասկացողություն լարավոր կենդանիների տիպի մասին և նրա բաժանումը յենթատիպերի։ Նշանարիկը վորպես անդանդների յենթատիպի ներկայացուցիչ։ Նշանարիկի մարմնի կաղմության առանձնահատկությունները և նրա բազմացումը։ Նըշտարիկը վորպես միջակա ձև։

Ջկները վորպես վողնաշարավորների յենթատիպ։ Գետի պեղկերը վորպես ձկների դասի ներկայացուցիչ։ Նրա մարմնի առանձնահատկությունները՝ կապված ջրային կենցաղի հետ։ Շնաձկների և թառափների կաղմության պարզ գծերը վորպես նրանց ծագման հեռության ապացույց։

Կրկնաշունչ ձկները և նրանց մոտիկությունը յերկենցաղներին։ Վոսկրոտ ձկների ամենաարժեքավոր տեսակները և նրանց բաշխումը (փրփրուկ (տրեսկա), տառեխներ, սալմոններ և ուրիշները)։ Զկնորսական ուղիները և նրանց կապը ձկան կյանքում գոյություն ունեցող սեղոնային յերեվույթների հետ։ Զըկների արհեստական սերմնավորումը և լճային տնտեսություն։ Բրածո ձկներ։ Զկների դասի ընդհանուր բնութագիրը։

Գործնական պարապմունքներ։ Պերկեսի հերձումը։ Կինոֆիլմ «Զկնորսարաններ» (ձկնային պրոմիսլաներ)։

VII. ՅԵՐԿԿԵՆՑԱՂՆԵՐ ՅԵՎ ՍՈՂՈՒՆՆԵՐ (6 ժամ)

A. ՅԵՐԿԿԵՆՑԱՂՆԵՐ (ամֆիբներ)

Գորտը վորպես որինակ յերկենցաղների դասի։ Գորտի մարմնի ներքին և արտաքին կաղմությունը կապված նրա կեն-

ցաղի հետ։ Զկան հետ համեմատած՝ դորտի մարմնի կաղմության բարդացումը կապված նրա ցամաքային կյանքին անցնելու յերկութի հետ։ Անուշահամ ջրամբարների առկայությունը, վորպես գորտերի գոյության անհամարեցած պայման։ Գորտի բաղմացումն ու զարգացումը։ Յերկենցաղների կերպարանափոխությունը։ Հերեփուկի անցումն կրկնաշունչ կենդանիների աստիճանով։ Անպօչների կարգի այլ ներկայացուցիչները, նրանց կենսաբանական առանձնահատկությունները և տված ոգուածը վնասքեր միջատների ու կաղղամորթների վոչնչացման դորդում։

Պոչավոր յերկենցաղները և նրանց կենսաբանական առանձնահատկությունները (սալամանդրաներ, պլոտեռն, տրիտոն, ամբողիստմա)։ Բրածո յերկենցաղներ։

Յերկենցաղների գասի ընդհանուր բնութագիրը։

Գործնական պարապմունք։ Գորտի հերձումը։

B. Սողուններ (ուկտիլներ)

Սողունների դասի գլխավոր կարգերը։ Մողեսը վորպես սողունների դասի ներկայացուցիչ։ Մողեսի անատոմիական-ֆիզիոլոգիական տարրերությունները յերկենցաղներից և նրա առավել բարձր զարգացման գծերը։ Մողեսի կենսաբանությունը։ Ոճերի, կրիաների և կոկորդիլոսների կենսաբանական առանձնահատկությունները։ Սողունների տեղը ժամանակակից կենդանական աշխարհում և նրանց ծաղկման նախկին շրջանը յերկրի կյանքի միջին դարաշրջանում։ Մեռած մողեսների ազգակցական կապը յերկենցաղների և ժամանակակից սողունների հետ։

Այս դասի ընդհանուր բնութագիրը։

VIII. ԹՌՉՈՒՆՆԵՐ (6 ժամ)

Աղավնին վորպես թռչունների դասի որինակ։ Աղավնու մարմնի արտաքին ու ներքին կաղմության առանձնահատկությունները, կապված նրա թռչելու հարմարանքների հետ։ Թռոչունների ձվի կաղմությունը և սաղմի զարգացումը։ Բնակալ և բնախոս թռչունների տարրերությունները։ Թռչունների կենսա-

բանությունը (սեռային և սեղոնային դիմորֆիզմ, կանչելլ, բայն դնելը, չվելը և սրանց պատմական պատճառները) :

Տափակակուրծք քոչութենք. Աֆրիկական ջայլամ, սրա կազմության, բուն դնելու և փետրավորման առանձնահատկությունները: Այլ վաղող տափակակուրծք թռչուններ (կիվի, կտուր, եմու) :

Ակնարկ վողնուցակուրծք քոչութենքի գլխավոր կարգերի վրա

Սագագիներ. Վայրի բաղը վորպես սագաղիների որինակ: Բաղի կազմվածքի առանձնահատկությունները, կապված նրա ջրային կենցաղի հետ: Սերնդի հողատարությունը և բաղի կենսաբանական այլ առանձնահատկությունները: Սագաղիների այլ ներկայացուցիչները՝ սագեր, կարապներ:

Հալվագիներ. Ընտանի հավը վորպես դետնաբնակ թռչունների ներկայացուցիչ: Նրա կառուցվածքի առանձնահատկությունները, կապված նրա գետնի միա ապրելու կենսաձևի հետ: Ընտանի հավերի վայրի աղլակիցները՝ բանկիվյան (հնդկական) աքաղաղը, ֆաղանը, անտառահավը, աքարը, կաքավը, փասիտնը: Նրանց կյանքի ընդհանուր նկարագրությունը և տարբերվող նշանները:

Ցերեկային գիշատիչներ. Գիշատիչ կենդանիների ընդհանուր բնութագիրը (կտուցը, մաղիլները, թևերը, տեսողությունը և այլն) և նրանց կենսաբանական առանձնահատկությունները: Գիշատիչների մեծ մասի տված ռողուտները (ուրուրներ, արծիվներ, անդղներ, բաղեներ և այլն):

Բուեր. Բու և բվեճ: Բուերի կառուցվածքի առանձնահատկությունները կապված նրանց կենցաղի հետ: Բուերի տված ողուտները վնասակար կրծողների վոչնչացման գործում:

Փայտփորներ. Մեծ խայտարդետ փայտփորը վորպես որինակ մաղլցող ծառաբնակ թռչունների: Փայտփորիկի կառուցվածքի առանձնահատկությունները կապված նրա սննդի տեսակի հետ:

Ճնդուկներ. Այս կարգի ընդհանուր բնութագիրը, Այս կարգի մի քանի ներկայացուցիչները (ծիծեռնակը, աղոավը, սար-

յակը, քնարահավերը, արքայիկները, գրախտականները և այլն): Ընտանի ճնճղուկը, նրա կառուցվածքի և կենսաբանության առանձնահատկությունները:

Գյուղատնտեսության համար ողտակար թռչուններին հրապուրելն ու պահպանելը և պայքար վնասատուների դեմ: Արհեստագործական թռչունների տնտեսական նշանակությունը և նրանցից ստացվող արդյունքները: Արհեստագործական թռչուններին գիշատիչ վոչնչացումներից պահպանելու միջոցառումները:

Թռչունների ծագումն ու աստիճանական զարգացումը (նախաթռչուն (արխեոպտերիքս) և այլ բրածո թռչուններ):

Թռչունների դասի բնութագիրը:

Գործնական պարապմունքներ. աղավնու ցուցադրական հետազոտմը:

IX. ԿԱՅԻ ԱՍՍՈՒԻՆԵՐ (12 ժամ)

Ճագարը վորպես որինակ կաթնասունների: Կաթնասունների արտաքին կառուցվածքի և ներքին որդանների տարրերի: առանձնահատկությունները՝ մյուս դասերին պատկանող կենդանիների համեմատությամբ:

Կաթնասունների ձևերի բազմապիսությունն ու մասնագիտացումը՝ կապված նրանց կենցաղի ու բնակվայրի հետ:

ա) Միանցքանիները (յեխիդնան, բաղակառուցը) վորպես կաթնասունների ամենապրիմիտիվ ներկայացուցիչներ:

բ) Պարկավորներ. Պարկավորների կազմության և նրանց բազմացման առանձնահատկությունները: Պարկավորների ունեցած ծավալումը անցյալ յերկրաբանական ժամանակներում:

շ) Միջատակերները և ձեռքարկանիները (չղջիկները) վորպես ավելի քան պրիմիտիվ ընկերքային կաթնասուններ: Խլուրդի և չղջիկի կառուցվածքի ու կենսաբանության առանձնահատկությունները կապված նրանց կենցաղի ու սերնդի հետ:

դ) Կրծողները վորպես մանր կաթնասունների ամենատարածված և բազմազան խումբ: Կրծողների պատճառած վնասնե-

ըլ և ողուտը : Պայքարի միջոցները կրծող վնասարարների դեմ :

յե) Գիշատիչները և նրանց անառոմիական-կենսաբանական առանձնահատկությունները՝ կապված գիշակերության հետ : Բնտանի չների զանազան ցեղերն ու սրանց վայրի նախնիները : Գիշատիչների պատճառած վնասները և ողուտը :

Արգելանոցների նշանակությունը ԽՍՀՄ-ում ամենաարժեքավոր ցեղեր տարածելու և նրանց ակկլիմատիզացիայի յենթարկելու գործում (սամույլ, ջրասամույլ, աղվես, սկյուռ, կղաքիս) :

զ) Տանույանները վորպես ջրային կենցաղին անցած գիշատիչների մի յենթակարգ : Այս կարգի արհեստագործական նշանակությունը :

ե) Կիտազգիները վորպես յերկրորդարար-ջրային կաթնասուններ : Գրելանդյան կետի կառուցվածքի առանձնահատկությունները : Կիտազգիների արհեստագործական նշանակությունը :

ը) Ամբակավորները և նրանց ստորաբաժանումը՝ անդուդամատ և զուգամատ ամբակավորների, չվորոճողների, ուղտերի և յեղջուրագորների (վորոճողների) :

թ) Կնիքավալորները և նրանց կառուցվածքի առանձնահատկությունները : Փղերի մերձավոր նախնիների մահացումը սառցի գարաշրջանում :

ժ) Կապիկները և նրանց ստորաբաժանումը տափաքիթ, նրբաքիթ կապիկների, մարդակերպ կապիկների :

Բնտանի կաթնասունների արհեստական բուծումը և նրանց ծագումը : Կաթնասունների ամենաաղինալոր կարգերի ծագումը (ամբակավորների, գիշատիչների, միջատակերների) :

Կաթնասունների դասի ընդհանուր բուծագործերը :

Ցուցադրում մկան կամ ճագարի հերձումը :

ԲՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ*)

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Բուսաբանության ծրագրի խնդիրն ե՝ տալ տեխնիկումի ուսանողներին գիտականորեն հիմնավորված այնպիսի սխտեմատիկ գիտելիքներ և ունակություններ, վորոնք անհրաժեշտ են նրանց գործոցական ապագա աշխատանքի համար . ընդլայնել ուսանողների հորիզոնը՝ կապելով բուսաբանության գասընթացը գյուղատնտեսության բնագավառի և բուսաբուծության արդյունքները տեխնիքապես ոգտագործելու կարեորագույն խընդիրների հետ . պատրաստել բարձրորակ մասնագետներ, ոժտված բույր հարկավոր գիտելիքներով և ունակություններով, կարող՝ ինքնուրույն կերպով պատրաստելու ուսումնական անհրաժեշտ պիտույքները, կազմելու հերթարիաներ, հալաքելու ուերմբերի ժողովածուներ, վեղետատիվ բազմացման նմուշներ և այլն, ինչպես և կատարելու դպրոցում բուսաբանության վերաբերյալ անհրաժեշտ ցուցագրումները և փորձերը :

Բուսաբանության դասընթացը, ավելի արդյունավետ անցնելու համար, ուսման պլանով փոխադրվում ե յերկրորդ կետամյակ, գարնանային ժամանակ, վորը հնարավորություն կտարուսական կենդանի որինակներով յուրացնելու ամբողջ «Ակնարկ» բուսական աշխարհի վրա» բաժինը, թե դասարանում, և թե սպատ բնության մեջ՝ եքսկուրսիաների ժամանակ : Բույսերի սխտեմատիկայի ուսումնասիրությունը բուսական աշխարհի

*) Ծրագիրը սուսերենից թարգմանել և հայերեն թարգմանությունը խմբագրել ե պրոֆ. Ալ. Տեր-Պողոսյանը :

կենդանի ներկայացուցիչների վրա՝ ավելի ամուռ, հաստատուն զիտելիքներ և ունակություններ կտա, հնարավորություն կտա ուսումնասիրողներին դորձնականորեն ծանոթանալու բույսերի բնորոշումներին, բնության մեջ եքսկուրսիաներ կատարելու մեթոդիկային, կոնսերվեցու տեխնիկային, բույսերի հերթարիզացիային, տախտակներ և ժողովածուներ կազմելուն։ Բուսաբանության ուսումնասիրությունը զարնանը թույլ կտա ուսանողներին լավ ծանոթանալ տեղական Փլորայի գարնանը ծաղկող այն բույսերին, վորոնց ծանոթությունն անհրաժեշտ է ըստ տարրական դպրոցի ծրագրի։ Բացի զրանից գարնանն է հնարավորություն ստեղծվում ծրագրի բոլոր բաժինների վերաբերմամբ ավելի խորունկ և ավելի եֆեկտավոր փորձեր դնել և գործնական աշխատանքներ ու դիտողություններ կատարել։

Ի նկատի ունենալով, վոր ծրագրին անցնելու ժամանակ ուսանողները տարրական դպրոցում աշխատելու համար հարկավոր ունակություններ պետք է ստանան, անհրաժեշտ ե կենդանի անկյունում դնել տեղական այնպիսի դիտողություններ ու աշխատանքներ, վորոնք կատարվում են տարրական դպրոցում, որինակ սերմերի ծլեցում տարրեր պայմաններում, դիտողություններ ծիլերի գուրս գալու, նրանց աճի վրա, աշխատանք գանգան բույսերի վոստերի վրա, բազմացում մատերով և այլն։

Դասընթացի ծավալին և ծրագրի խնդիրներին համապատասխան կենդանի անկյունում պետք է լինեն բույսերի զանազան խմբերի ներկայացուցիչներ։

Անհրաժեշտ է աքվարիումներում ունենալ ելոդիա, վալվաներիա, յեղջերատերել (քօգոլիստնիք), փետրատերել (քրիստոլիստնիք), ջրոսպ (Limna) և այլն։

Յամաքային բույսերից պետք է ունենալ՝ տրապեսկանցիա, պատառուկ, վայրի խաղող, գարնանածաղիկ, խորդենի (գերան), զանդակածաղիկ (Փյուսիա), փամփլառուկ)=ծովասեղ (Փյուսիա) սոխաբույսեր, չորային շրջանների բույսեր՝ կողիներ (կակտուներ), ազագիներ, հալվե՝ փշտերելիներից՝ կիպարիսներ և նոճներ, վորոնց սերմերից հեշտությամբ կարելի յեւ աճեցնել,

արմավենիներ՝ վորպես միաբուն բույսերի ներկայացուցիչներ, վորոնք նույնպես հեշտությամբ աճեցվում են սերմերից։

Մարտ ամսին կենդանի անկյունում պետք է լինեն զանազան ծառերի կտրած ճյուղեր։

Ապրիլ-մայիս-հունիսին կենդանի անկյունում պետք է լինեն տեղական Փլորայի գարնանը ծաղկող բույսերի բոլոր ներկայացուցիչները։

Ամեն ար դիտելով այդ բույսերը կենդանի անկյան մեջ՝ ուսանողները հաստատավես կհիշեն դրանք և կկարողանան այնուհետև ճանաչել այդ բույսերը թե անտառում և թե դաշտում։

Կենդանի անկյունում պետք է պատրաստվեն նաև բուսաբանական նյութեր՝ կենդանի վիճակում ոգտագործելու համար, այսինքն՝ բակտերիաների կուտուրաներ, միարժիշ ջրիմուռների կուլտուրաներ, բորբսասունկերի կուլտուրաներ, մամուռի նախածիլերի, ձարխոտերի և միջատակեր բույսերի ծլանքների կուլտուրաներ, յեթե միայն նրանք կան տեղական Փլորայում։ Ծրագիրը հաջողությամբ յուրացնելու համար, կենդանի նյութից բացի, անհրաժեշտ է ունենալ նաև սպիրտային և չոր բաշխելի մատերիալ, վոր կլրացնի պակասող կենդանի նյութը, որինակ՝ ծածկասերմ, բույսերի պտուղներ և սերմեր, փշտերելիների կոներ, մամուռներ, քոսեր, ձարխոտեր, սնկեր և այլն։ Կենսաբանության կարիքնետում պետք է լինեն թեմատիկական և սիստեմատիկական հերբարիաներ, բույսերի ձեւաբանությանը, բնախոսությանը և դասակարգությանը վերաբերյալ տախտակներ, եքսկուրսիոն պիտույքներ, մանրագիտակներ, խոչըրացույցներ, միկրոսկոպիական պրեպարատներ բույսերի անատոմիային վերաբերյալ, բանկաներ և ուեակտիվներ՝ բույսեր կոնսերվելու համար, բանկաներ, թուղթ և մամուռներ՝ բույսեր չորացնելու համար, խավաթուղթ՝ պատի տախտակներ և ժողովածուներ կազմելու համար, անոթների և ուեակտիվների հավաք՝ ծրագրում նշված գործնական աշխատանքների համար։

Յերկարատե դիտողություններ պահանջող գործնական ամբողջ աշխատանքներ կարող են դրվել կենդանի անկյունում՝ իրենց մշակման համար առանց հատուկ սահմանված ժամեր ունենալու։ այսպես՝ «Սերմ» բաժնի համար աշխատանքներ՝ զա-

նաղան պայմաններում սերմեր ծլեցնելու վերաբերյալ ծլունակության և տնտեսական պիտանիության վորոշում, դիտողություններ սերմերի ծիլերի վրա: «Արմատ» բաժնի վերաբերյալ՝ փորձեր ջրային կուլտուրաների, գեռտրոպիզմի վերաբերյալ և այլն: «Տերե» բաժնի համար՝ փորձեր ածխածնի յաւրացման վերաբերյալ ստվերավորված տերեկի միջոցով, ջրի գոլորշացումը տերեներով, ելոդեայի տերեների թթվածին արտադրելու լույսի տակ, փորձեր հելիտրոպիզմի վերաբերյալ: «Ցողուն» բաժնի համար՝ փորձեր ցողունի կեղելն ողակածե հանելու վերաբերյալ, փորձեր արմատային ճնշման վերաբերյալ, դուրս յեկող հոսանք, ճյուղեր արձակելը և այլն: «Բույսերի բազմացումը» բաժնի համար՝ փորձեր արհեստական փոշոտման, վերետատիվ բազմացման (մատեր, տնկիներ) վերաբերյալ:

Մնացած գործնական աշխատանքները, վոր մատնանշված են ծրագրում, բացի դասարանական պարապմունքների ժամերին նրանց մշակումից, կարող են մշակվել և խմբակային պարապմունքների ժամանակ, որինակ՝ բույսերի փորոշումն ըստ փորոշիչի, հողերի անալիզ, միկրոսկոպիական պրեպարատների պատրաստում, հերբարիկացիա և այլն:

Ինքն ըստինքյան հասկանալի յե, վոր ծրագրում նշված բույր ցուցադրումներն ու գործնական աշխատանքները, յուրաքանչյուր տեխնիկումում կատարվում են համաձայն նրա ժամանակի բյուջեյի և դիտողական պիտույքների ու լաբորատորական պարագաների սարքավորման:

Ծրագրի յուրացման ժամանակ, ուսումնական այլ պիտույքների հետ մեկտեղ, բավականաչափ ոժանդակություն և ցույց տալիս դասի ժամանակ կինոժապավենների և եպիդիտոսկոպակի դիսպոդիտիվների ու նկարների ցուցադրումը: Նեղաթաղանձավարատը, իր հեշտ սարքավորման և գործադրման չնորհիվ, թույլ և տալիս կինոժապավենների ցուցադրումները կիրարկել վորպես շարքային ուսումնական պիտույք, ըստ փորում հնարավոր և ոդտագործել վոչ վողջ ժապավենն ամբողջապես, այլ միայն նրա առանձին կադրերը, յեթե այդ հարկավոր և դասի ընթացքի համար:

Կարելի յե հանձնարարել. «Արմատը վորպես ջրահամքային

աննդառության որդան» թեմայի համար՝ «Ազոտի չքջանառությունը բնույթյան մեջ» ֆիլմը: «Բույսերի աճը» թեմայի համար՝ «Ցողուն» բաժնի կազմակցությամբ— «Բույսերի աճը» ֆիլմը: «Տերե» թեմայի համար՝ «Արեւ վորպես եներդիայի աղբյուր» ֆիլմը (2 և 3 մասերը). «Բույսերի բազմացումը» թեմայի համար՝ «Հարավը Տամբովում» ֆիլմը 3 մասից բաղկացած. «Ակնարկ բուսական աշխարհի վրա» բաժնի համար՝ «Հացարույսերի մրկելը», «Բրինձ», «Ցեղիպատացորեն», «Բամբակ», «Կենափ» ֆիլմերը:

Գարնանը՝ ապրիլի վերջերին, մայիսին, հունիսի սկզբներին՝ «Ակնարկ բուսական աշխարհի վրա» բաժնը գրեթե ամբողջապես կարելի յե անցնել կենդանի մատերիալի վրա՝ բերելով կենդանի անկյուն և բաշխելով այն դասի ժամանակ վորպես բաշխման մատերիալ:

Ի լրացումն 1934 թվի ծրագրի, միանդամայն անհրաժեշտ ե զործնականապես, կենդանի որինակների վրա ուսումնասիրել գորտնուկների, վարդածաղկիների և շուշանների ընտանիքները: Քանի վոր հենց այս ընտանիքների ներկայացուցիչները մեծ մասմբ հանդիսանում են մեր գարնանային վոչ ծաղկող բույսերը և ծանոթությունը նրանց հետ պահանջվում ե տարրական դրագուցի ծրագրով:

Այն բույսերը, վորոնք չեն կարող ուսումնասիրվել դասերի ընթացքում և եքսկուրսիաների ժամանակ կենդանի մատերիալի վրա, պետք ե ուսումնասիրվեն չոր և սպիրտային բաշխական մատերիալի ու այնուհետև տախտակների և հերբարիաների վրա:

Բացի դասարանական պարապմունքներից և եքսկուրսիաներից, սովորողներին կարելի յե տալ ինքնուրույն առաջադրանքներ. վորոշել հավաքած բույսերը, հավաքել տերեների, ծաղկափթթյունների տիպերի, տերեների դասավորության տիպերի ժողովածուներ, քուեր, մամուռներ, ձարխոտակերպներ և այլն: Հավաքած ամբողջ նյութը պետք ե մշակել արտադասյա ժամանակամիջոցում: Մշակման ժամանակ պետք ե ցուցումներ տրվեն հերբարիկացիայի, կոնսերվելու, ժողովածուներ կազմելու վերաբերյալ և այլն: Ուսանողների ձեռքով պատրաստվածը թող-

նըվում և կենսաբանական կարինետում և տրվում և յերբորոք կուրսերի ուսանողներին վորպես պիտույք մանկավարժական պրակտիկայի համար:

Հստ հնարավորության պետք և բուսաբանական եքսկուրսիաներ կատարվեն դեպի անտառ, դեպի դաշտ, դեպի ջրամբար՝ ծանոթանալու ջրային բույսերին, դեպի խորհունատեսություններ և կոլտնտեսություններ, յեթե նրանցում վորեե տեխնիկական կուլտուրաներ են մշակվում, դեպի բուսական սելեկցիոն կայաններ, դեպի գավառագիտական թանգարան և այլն:

Առաջին կուրսի բոլոր ուսանողներին ամառվա համար պետք և տրվեն անհատական առաջադրանքներ. կազմել հերթարիխաներ տեղական շրջանի կուլտուրական և տեխնիկական բույսերի, հերթարիխաներ մոլախոտերի, ժողովածուներ պտուղների և սերմերի, տախտակներ ըստ տերևների ձևերի, տերեների դասավորության, ըստ տերեների աշնանային գունավորության, ըստ տերենի ձևափոխությունների և այլն:

Հետևյալ տարվա աշնանն առաջադրանքը պետք և ստուգիլ և ուսանողների կողմից հավաքված նյութերը, համապատասխան մշակումից հետո, պետք և պահպեն մանկավարժական ուսումնարանների բնագիտական կարինետում: Հարկավ, յուրաքանչյուր առանձին ուսումնարանում, տեղական պայմանների համաձայն, ծրագրի ուսումնասիրությունը կարող է յուրահատուկ բնույթ ունենալ: «Ակնարկ բուսական աշխարհի վրա» բաժինն անցնելու ժամանակ բույսերի ընտրությունը, գործնական աշխատանքներն ու եքսկուրսիաները նշանակալից չափով կախված են տեղական պայմաններից և, անկախ ծրագրային պահանջներից, պետք և նպատակ ունենան սովորեցնել ուսանողներին գովառագիտական նյութն ոգտագործելու աշխատանքի համար:

Ծ Ր Ա Գ Ի Բ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բուսաբանությունը վորպես գիտություն բույսերի կազմության և կյանքի մասին: Բուսաբանության ուսումնասիրության նշանակությունը վորպես աշխալիստական հողագործության

միերակառուցման զենք: Բույսերը վորպես աղբույնը արդյունաբերական և գյուղատնտեսական հումույթի: Բուսաբանությունը վորպես ԽՍՀՄ-ի արտադրական ուժերի աճման գործոններից մեկը: Բուսաբանության ուսումնասիրության նշանակությունը դպրոցում:

ԲՈՒՅՍԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՑԱՆՔԸ

1. Բույսերի արտաքին և ներքին կազմությունը
(ներածության հետ— 5 ժամ⁴)

Բույսի գլխավոր գործարանները՝ արմատ, ցողուն, տերե, ծաղիկ և նրանց՝ բույսի կյանքի համար ունեցած՝ նշանակությունը: Բույսերի բջջային կազմությունը:

Բջջային ուսմունքի պատմությունը: Բուսական բջջի կազմությունը՝ թաղանթ, պլոտոպլազմա, կորիզ, վակուոններ, թաղահյութ, բջջային պարփակումներ: Պրոտոպլազմայի, կորիզի և բջջի այլ որդանոիդների (գործարանակերպների) գերը: Բույսի բաղադրության մեջ մտնող քիմիական տարրերը: Անորգանական և որգանական նյութեր: Որգանավորված և վոչ որգանավորված բնության քիմիական տարրական բաղադրության միասնությունը: Բուսական բջիջը վորպես բույսի կենդանի տարր: Կենդան բջջի կենսական պրոցեսները— նյութերի փոխանակություն, շարժողություն, զգացողություն, աճեցողություն, բազմացում և մահ: Կենդան սպիտակուցի վորակային առանձնահատկությունը վորպես տարրերություն անկենդան բնությունից: Գաղափար բուսական հյուսվածքների մասին: Կազմակերպող, ծածկույթային մեխանիկական, հաղորդիչ հյուսվածքներ:

Ցուցադրումներ. 1) Սոխի բջիջների դիտումը միկրոսկոպի տակ. 2) Պրոտոպլազմայի շարժումը վալիսներիայի կամ ելոզեայի բջիջներում. 3) բջիջների կարիոկինետիկ բաժանման առանձին աստիճանների դիտումը միկրոսկոպի տակ սոխի արմատում:

2. Սերմ, նրա կազմությունը և ծլման պայմանները (5 ժամ)

Միաշաքիլ և յերկաքիլ բույսերի սերմերի կազմությունը ։ Սերմերի քիմիական բաղադրությունը՝ սպիտակուցներ, ոսլա և յուղեր պարունակող սերմեր։ Սերմերի ծլման պայմանները։ Բույսերի նոր կուլտուրաներ աճեցնելու կախումը բարեխառնությունից։

Նյութերի փոխարկումները ծլող սերմերի մեջ։ Փերմենտներ և նրանց գերը։ Ծլող սերմերի չնչառությունը։ Բույսի զարդացումը սաղմից։ Սերմերի ծլեցման խթանումը։ սերմերի բիոնտիզացիան, յարովիլացիան։ Սերմերի նախաղատրաստումը ցանքսի համար։ Սերմերի ծլունակության և տնտեսականորեն պիտանիության վրոշումը։ Պայքար ցանքերի աղբոտության դեմ։ Սորտական սերմերի նշանակությունը բերքատվությունը բարձրացնելու համար։ Պետական սերմնային վերահսկողության կազմակերպումը։

Ցուցադրում սերմերի չնչառության յերեվույթների։

Լաբորատորական աշխատանքներ։ 1) Ուսումնասիրություն միաշաքիլ և յերկաքիլ բույսերի սերմերի կազմության։ 2) Դէտողություններ միաշաքիլ և յերկաքիլ բույսերի սերմերի ծլըման վրա։ 3) Ծանոթություն սերմերի քիմիական անալիզի հետ վարոշում ջրի քանակի։ ածխածնի հայտնաբերումը այրման միջոցով։ սպիտակուցների, ածխաջրերի և ճարպերի հայտնաբերման յեղանակները սերմերի մեջ։ 4) ալյուրի կոպիտ անալիզը։

Լաբորատորական աշխատանքներ՝ վորոշելու համար սերմերի ծլունակության տոկոսը, տնտեսապես պիտանիությունը և տեսակավորումը։

3. Արմատը վորպես ջրահանքային սննդառության գործարան (5 ժամ)

Արմատի մակրո—և մկիրոսկոպիական կազմությունը։ Արմատների ձևափոխությունները։ Արմատի աճի առանձնահատկությունները։ Գեռտրոպիզմ։ Աղերի ջրային լուծույթների

ծծման պրոցեսները մազարմատների միջոցով։ Կենդան պրոտո-ուլաղմայի գերը ջրահանքային սննդառության պրոցեսների մեջ։ Թուրքորի և պլասմոլիզի յերկույթները։ Մազարմատների լուծող ազդեցությունը։ Նյութերի փոխադրությունը արմատի միջով։ արմատային ճնշումը։ Բույսի հողից ստացած տարբերը։ Ջրային կուլտուրաների մեթոդի նշանակությունը։ Հողի պարարտացման և մեքենական մշակման նշանակությունը բերքատվությունը բարձրացնելու համար։ Հողի գոյացումը։ Նրա կաղմությունն ու բաղադրությունը։ Հողի ջրային ռեժիմը (խոնավատարություն, ջրաթափանցկականություն, մազականություն, կլանման ընդունակություն)։ Պարարտացման տեսակները և պտղափուրություն։ Պարարտացումներ լրիվ և թերի, ուղղակի և անուղղակի ներգործող, բնական, կանաչ և հանքային։ Կոլեկտիվացման նշանակությունը գյուղատնտեսական կուլտուրաները բարձրացնելու համար։ Արհեստական ջրային կուլտուրաներ։

Ցուցադրություններ։ 1) արմատի ընդլայնական հաստածի միկրոսկոպիական պրեզարատների դիտում։ 2) միկրոսկոպի տակ արմատի ծայրապատյանի և արմատի մազմզուկների դիտում։ 3) արմատների լուծող ազդեցությունը մարմարե թիթեղի վրա։

Հողերի քիմիական և ֆիզիկական հատկությունները։

Լաբորատորական աշխատանք։ Վորձեր ոսմոսի վերաբերյալ, պլասմոլիզի յերկույթները։

Կինո Փիլմ՝ «Ազոտի ընանառությունը բնության մեջ»։

4. Տերևը վորպես բույսի ողային սննդառության, ջրի գործընթացման և շնչառության գործարան (5 ժամ)

Տերևի մակրո—և միկրոսկոպիական կազմությունը։ Մաշկը։ Հերձանցները, նրանց կազմությունն ու գերը։ Տերևի փոխադրական ձանապարհները և մեխանիքական հյուսվածքը, նրանց դասավորությունն ու գերը։ Տերևի փափուկ մասը։ Քլորիֆիլի հատիկները, քլորոֆիլի գոյացման պայմանները (լույս, յերկաթի ներկայություն)։ Ածխածնի յուրացումը։ Յոթոսինթեզ։ Ուլայի և այլ որդանական միացությունների գոյացումը։ Ֆերմենտների գերն այդ պրոցեսում։ Կանաչ բույսերի նշանակությունից։

թյունն որդնական աշխարհի կյանքի և ժողովրդական տնտեսության համար։ Քաղաքների կանաչաղարդման նշանակությունը ողի առողջացման համար։ Բույսերի աճեցումը զերմոցներում ելեքտրական լույսի տակ։ Ֆոթոպէրիոդիզմ։ Զանազան կուտուրական բույսերի շարժումը գեղի հեռավոր հյուսիս։ «Ուրի պարտացումը» ածխաթթու գազով— հատուկ խողովակների միջոցով Փարբիկա-դործարանային արդյունաբերության ժամանակ, վորպես բերքատվությունը բարձրացնելու միջոց։

Զրի գոլորշիացումը տերեններով։ այս պրոցեսի նշանակությունը։ Բույսերի պաշտպանողական հարմարանքները յերաշտի գեմ պայքարի գործում։ Յերաշտակայուն ձեւերի կենսաբանական առանձնահատկությունները։ Յերաշտի գեմ պայքարի դմասավոր միջոցառումները։ Կանաչ տնկվածքների և պաշտպանող անտառային շերտերի նշանակությունը։ Տերեաթափ, նրա պատճառները և բույսերի կյանքի համար ունեցած նշանակությունը։

Բույսերի չնչառությունը։ Նյութերի փոխանակությունը բույսերի մոտ։ Ասլիմիլացիա և դիսիմիլացիա։ Նրանց հակադրությունը և փոխադարձ կարգը։ Այս պրոցեսների քրիմիական և եներգետիկական կողմերը։ Հասկացողություն չնչառական ֆերմենտների մասին։ Ածխածնի շրջանառությունը բնության մեջ։ Տերեի ձեւափոխությունները և նրանց կենսաբանական նշանակությունը։

Ցուցադրումներ։ 1) կինոֆիլմ՝ «Արևն եներգիայի աղբյուր»։ 2) գիտում տերեկի պրեպարատների միկրոսկոպի տակ, 3) ելուղեայի տերենների թթվածին արտադրելը լույսի տակ (չնարավոր և նաև ելեքտրական լամպի տակ), 4) ուսլայի առաջացումը տերենների մեջ լույսի տակ։

5. Ցողուն, նրա կազմությունը և բնախոսական նշանակությունը (4 ժամ)

Ցողունի դերը բույսի կյանքում։ Ցողունի մակրո—և միկրոսկոպիական կազմությունը։ Ցողունի մեխանիկական և փոխադրական տարրերի նշանակությունը։ Կամբիումի նշանակությունը, ցողունի հաստացումը, ցողունի աճը յերկարությամբ։ գաղաթնային բողբոջ։ աճման կոնը։ Բույսերի աճի աղղակները։ Ցողու-

նի աճի կարդավորումը այգեգործության մեջ։

Սննդատու նյութերի տեղաշարժը ցողունի միջով։ Վերընթաց հօսանք։ Նրանց պատճառները։ Ստորերկրյա ցողունները և նրանց դերը բույսի կյանքում։ Ցողունի այլ ձևափոխություններ։ Զանազան ցեղերի փայտանյութի և յենթակեղերի (քրծենի) արդյունաբերական ոգտագործումը։

Ցուցադրումներ։ 1) Դիտողություն վերընթաց հօսանքի ճանապարհների՝ հատած ճյուղերի վրա։ 2) Միկրոսկոպի տակ միաշաքիլ և յերկշաքիլ բույսերի ցողունների հատածների դիտում, 3) թելավոր կուտուրաների ցողունների դիտում։

Կինոֆիլմ՝ «Բույսերի աճը»։

Լաբորատորական աշխատանքներ բողբոջների կազմությունն ու զարդացումն ուսումնասիրելու համար, դիտողություններ ցողունի աճի։

6. Ծաղկավոր բույսերի բազմացումը (5 ժամ)

Հասկացողություն վեգետատիվ և սեռական բազմացման մասին։ Վեգետատիվ բազմացման տեսակներ (արմատներ, տրնելիներ, բողբոջներ, պալարներ, սոխուկներ, պատվաստացյուղեր)։ Մոլախոտերի վեգետատիվ բազմացումը և պայքարի միջացները նրանց դեմ։ Պատվաստ։ Պատվաստի նշանակությունը պատղաբուծական և բանջարաբուծական գործում։

Ծաղկելը վորակս սեռական բազմացման գործարան։ Ծաղկել զարգացումը։ Ծաղկի կազմությունը։ Փոշոտում քամու և միջատների միջոցով։ Խաչձև փոշոտումն ապահովող հարմարանքներ։ Ծաղկավոր բույսերի բեղմնավորության պրոցեսի եյությունը։ Արհեստական փոշոտում, նրա դերը բույսերի նոր ցեղեր առաջացնելու գործում։ Միչուրինի և բերբանկի աշխատանքները։ Խորհրդային սելեկցիոն կայանների նվաճումները ցրտակայուն, յերաշտակայուն, բարձրարդյուն և հիվանդադիմացկուն կուլտուրաներ առաջացնելու գործում։

Պտուղների և սերմերի զարգացումը։ Պտուղների տեսակները։ Պտուղների և սերմերի տարածումը։

Ցուցադրումներ։ 1) Պատվաստի տիպերը։ 2) որինակներ վե-

գետատիվ բազմացման. 3) «Միջուրինյան տնկարանը» կամ «Հարավը Տամբովում»։ Կինոժապարհների ցուցադրում։

կարութառական աշխատանք. Ծաղկի և պտուղների կադ-
մաւթյան ուսումնասիրությունը. փոշու և սերմաբողբոջի դե-
տումը միկրոսկոպով:

7. Ակնարկ բուսական աշխարհի վրա (21 ժամ)

Բուսական աշխարհի հիմնական խմբերը։ Բույսերի բաժանումը կամ բերի և բույսերի դասակարգության նշանակությունը տեսության և պլանտիկայի համար։

iii) Ապորավոր բույսեր (12 ժամ)

Բակտերիաներ. Նրանց կազմությունը, բիոլոգիան և տարածումը: Բակտերիաների դերը բնության, արգյունաբերության և դյուղատնտեսության մեջ: Բակտերիաների դերը նյութերի շրջանառության գործում: Խմորման, և փոտոթյան պլրոցեները. սիլոսի և վշափնջի (փնջարմատի) բակտերիաները: Հողային և պղարբային բակտերիաներ: Պարագիտ բակտերիաներ և պայքարը նրանց դեմ: Պատվաստի մեթոդները:

Զրիմուտները վորպես բուսական աշխարհի հնագույն խոռոք։ Զրիմուտների կազմությունը. Նրանց բազմացման բազմազանությունը։ Միաբնակչ և բազմաբնակչ զրիմուտներ։ Անուշ ջրերի ջրիմուները։ Ծովալին ջրիմուտներ։ Նրանց տեխնիկական և դյուրատանտեսական նշանակությունը (սոսինձ, պարարտանյութ, կիր)։ Նրանց նշանակությունը յոդա—կալիումային արդյունաբերության մեջ։

Սունկեր. Ընդհանուր հասկացողություն սունկերի կազմության և բիոլոգիայի մասին։ Դրոժային, բորբոսային, տնային, շիստակապոր սունկ-սալորֆիտներ։

Սունկերը վորպես կուլտուրական բույսերի հիվանդություններ առաջացնողներ և պայքար նրանց դեմ (մրիկ, կարտոֆիլիք հիվանդություն, հաճարաժանդառ, ժանդ) :

նշանակությունը, վորպես բուսական աշխարհի պիտոներներ։ Քու-
սերի նշանակությունը առունդրային յեղջերվաբության մեջ։
Մամուլները վորպես ցամաքային բույսերի հնագույն խումբ։
Անցում ջրիմուներից ցամաքային բույսերին։ Սուրբին և բարձ-
րագույն մամուլներ։ Մամուլների կազմությունն ու բազմա-
ցումը։ Տերեալոր մամուլների դերը ջրամբարների ճահճացման-
և տորֆի առաջացման դործում։

բ) Զարխոտեր և մերկասերմեր

Զարիսոտերը, ձիաձետները, դետնամամուռները վորպեր, բարձրագույն անդթավորներ. ձարիսոտակերպների բազմացումը, սերունդների հաջորդականություն (սերնդափախություն): Բրածունդը ձարիսոտակերպներ, քարածուիդ դոյացումը:

Մերկասերմ բույսերը վորպես անցումն սպորտավորենքց
ծաղկավոր բույսերին: ԲնդՀանուր բնութագրում, բազմացում և
առարկանական աշխատանք:

8 ուցապրումներ. 1) դիտումն միկրոսկոպի տակ ջրիմուռների, դրույտի սունկերի, ձիաձետի սպորների և ձարխոտի սպորանզիլի, գրութիւնների; 2) Ծանոթություն անցած բույսերի տիպիկ ներկայացուցիչների հետ:

գ) Ծածկասերմ բույսերը կուլտուրական բույսերի որինակ-
ների վրա (9 ժամ)

Միաշաքիլ և յերկշաքիլ բույսերի՝ վորպես բուսական աշ-
նաբեկ բարձրագույն ներկայացուցիչների՝ ընդհանուր բնութա-
փերը՝ Կուլտուրական բույսերի ծագումը:

Շուշանազգիներ (Հռվտաշուշան, սպիտակ շուշան, արևելյան ակինթ) :

Հացաբույսեր և կերաբույսեր: Մաղկի կազմությունը և փո-
ստման յեղանակները: Ցորենի, հաճարի, վարսակի և այլ հա-
պատճենագործությունները: Կերաբույսեր: Կերային բաղայի նշանա-
պատճենագործությունները:

Գորտնուկները (անտառի պուտ, վոսկեծաղիկ) կամ ցինդ-

գորտնուկ) վորպես ներկայացուցիչներ վաղ ծաղկող բույսերի։
Նրանց բիոլոգիան։

Լորարույսեր, նրանց բնութագիրը. ամենակարևոր մշակույթների ներկայացուցիչներ՝ սոյա, սիսեռ, լորի, վոստ, առվույտ, վիկ, յեղիպտուռն։ Լորարույսերի գերը ցանքաշրջանառության մեջ։

Խաչածաղիկ բույսեր. ԽՍՀՄ-ում աճեցվող մշակույթների բնութագրումը. կաղամբ, բողկ, շաղզամ և այլն, նրանց տարատեսակները և նշանակությունը սննդի հարցում։

Մանանեխը և գոնդելը (ranc) վորպես յուղատու մշակույթներ։

Կանեփազգիները, վուշազգիները, փիփերը ները (մոլոչները) վորպես ներկայացուցիչներ թելատու և յուղատու մշակույթներ։ Ծաղկի, ցողունի և պտղի կաղմության առանձնահատկությունները։

Մորմազգիներ. պոմիդոր, կարտոֆիլ, ծխախոտ. այս բույսերի մշակույթները, նրանց նշանակությունը։

Վարդածաղիկներ. խնձորենիներ, բալենիներ, մորի. Ծաղկի կաղմության առանձնահատկությունները, տնտեսական նշանակությունը։

Բարդածաղիկներ, ծաղկի կաղմության առանձնահատկությունները և ծաղկափթթյուններ։ Արևածաղիկ, նրա ծաղկումը և նշանակությունը։

Համառոտ տեղեկություններ բուսական նոր մշակույթների բուծման մասին. ջուտ, կենդիր, կանեփ, ռամի. Կառուչուկատուներ։ Մշակույթային բույսերի ձևափոխությունները. ինչ և արդիւմ այս տեղղությամբ ԽՍՀՄ-ում։ Զեռք բերված նվաճումները. բացվող հեռանկարները։

Ցուցադրութեր. հերբարիաներ և կենդան նմուշներ՝ քննության առնված խմբերի ներկայացուցիչների։

Լաբորատորիական պարագմունֆներ. բույսերի վորոշումներ վերոշիչ միջոցով. հերբարիզացիայի մեթոդներ։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսանողների համար

1. Տիմիրյան, Բույսի կանքը. 2. Ժածովսկի. Ботаника для педтехникумов. 3) Веприков и Исаин. Растение, его жизнь, строение и польза, 1933 г. 4) Никонов. Ботаника. 5) Определители растений Маевского или Инатьевса. 6) Никонов. Практические занятия по ботанике в школе и в природе.

ԴԱՍՏՈՒՐԻ ՀԱՄԱՐ

- 1) Ենդելս. Անտի Դյուրինդ. 2. Акад. Келлер. Ботаника с основами физиологии, изд. 1932—33 г. г. 3) Исаин. Ботаника-4) Комаров. Происхождение культурных растений. 5) Максимов. Физиология растений, изд. 1932 г. 6) Талиев. Основы ботаники в эволюционном изложении, изд. 1931 г. 7) Каминский. Основы семеноведения. 8 Вильямс. Общее землеведение, изд. 1931 г. 9) Горшков. И. В. Мичурин и его работы. 10) Вильямс. Лютер Бербанк и его труды, изд. 1924 г. 11) Маевский. Определитель растений флоры средней России. изд. 1933.

ԵՎՈԼՈՒՑԻՇԽՈՆ ՈՒՍՄՈՒՆՔ*)

ԲԱՅԱՏՐԱԿԱՆ

- Եվոլուցիոն ուսմունքի դասընթացի ծրագրին հատկացված
463 ժամ, վոր բաշխված և հետեւյալ կերպով.
1. Ներածություն— 1 ժամ.
 2. Տիեզերքի ծագումը և յերկրի պատմությունը— 16 ժամ.
 3. Եվոլուցիոն ուսմունքի հիմունքները: Եվոլուցիայի ուղիւների հայտնաբերման մեթոդները— 8 ժամ.
 4. Փափոխականության ու ժառանդականության մասին յեղած դիտությունը և նրա նշանակությունը— 12 ժամ.
 5. Եվոլուցիոն գաղափարների զարգացումը— Եվոլուցիոն գաղափարները բիոլոգիայի մեջ մինչև Դարվին— 6 ժամ.
 6. Դարվինը և նրա ուսմունքը— 10 ժամ.
 7. Մարդու ծագումը— 6 ժամ.
 8. Կյանքի ծագումը յերկրի վրա— 4 ժամ:

Քանի վոր ուսման պլանում հանքարանության և յերկրաբանության ինքնուրույն դասընթաց չկա, ուստի յերկրաբանական նյութի մի մասը մացված և ֆիզիկական աշխարհագրության դասընթացի մեջ, իսկ հանքարանության և յերկրաբանության վերաբերյալ անհրաժեշտ դիտելիքները տրվում են ծրագրի առաջին՝ «Տիեզերքի ծագումը և յերկրի պատմությունը» գրվածում:

Բուսաբանության և կենդանաբանության դասընթացներից բուսական և կենդանական որդանիզմների կազմության և կենացական ֆուլցիաների մասին պատկերացում ստանալով՝ ուսանողները պետք են ծանոթանան այն դիտական ընդհանրացումներին,

*) Ծրագիրը ողուսերենից թարգմանել և հայերեն թարգմանությունը խմբագրել են պրոֆ. Ալ. Տեր-Պողոսյանը:

վորոնց հիման վրա որդանական աշխարհի որենքներն են բացահայտվում:

Ի նկատի ունենալով այն հսկայական նշանակությունը, վոր մեր որերում ձեռք ե բերել գենետիկան, անհրաժեշտ և առանձնացնել այն, վորպես հատուկ բաժին: Գենետիկան կարեռ կետ և հանդիսանում բուսաբանության և անասնաբուծության խընդիրները լուծելու համար. նա սելեկցիայի համար տեսական հիմք ե տալիս, ճիշտ մոտեցում ե տալիս մարդկային գենետիկայի (անարոպոգենետիկայի) հարցերին, այլև նյութ ե ընձեռնում եվոլուցիայի տեսության հիմնական մոմենտները հասկանալու համար:

Վերջին յերկու բաժինները՝ «Մարդու ծագումը» և «Կյանքի ծագումը յերկրի վրա» հանդիսանում են յեղափակումներ: Այս բաժիններն ապահովում են վորոշակի սահման գծել կենսաբանական և սոցիալ-տնտեսական յերելվությների միջև, հայտնաբերում են գիտության և կրոնի անհամատեղելիությունը և զինում ապագա մանկավարժին ակտիվ պայքարի համար՝ կրոնի բոլոր արտահայտությունների դեմ, այդ պատճառով ել նրանք պետք ե առանձնապես խնամքով մշակվեն:

ԾՐԱԳԻՐ (63 ժամ)

Ներածություն (1 ժամ)

Հասկացողություն եվոլուցիայի մասին: Եվոլուցիոն տեսությունը վորպես մատերիալիստական աշխարհայացքի բնական դիտական հիմք: Եվոլուցիոն ուսմունքը վորպես հակակշիռ բնության մասին յեղած լիդեալիստական և նպատակարանական (տելուզիական) հայացքների: Եվոլուցիոն ուսմունքի նշանակությունը հակարոնական պրոպագանդի մեջ: Իդեալիզմը և մեխանիզմը բուրժուական բիոլոգիայի մեջ: Գիտության ծաղկումը ԽՍՀՄ-ում՝ սոցիալիզմի համար վարած պայքարին պըակտիկ մասնակցություն ունենալու հիմունքով:

I. Տիեզերքի ծԱԳՈՒՄԸ ՅԵՎ ՅԵՐԿՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
(16 Ժամ)

Տիեզերքի մասին յեղած պատկերացումների զարգացումը՝ Հին ժամանակներից սկսած մինչև մաս որերը։ Գիտական տրվայալներ տիեզերքի ծագման և կազմության մասին՝ կրոնի դեմ մղած պայքարում։

Տիեզերագոյացման ընդհանուր պատկերը։ Արեգակնային սիստեմի եվոլուցիան։ Լապլասի և Զինսի հիպոթեզները։ Հիմնական գաղափարներ յերկրի կեղևի ծագման և կազմության մասին։ Յերկրի կեղևի քիմիական բաղադրությունը։ Գաղափար հանքային և լեռնային տեսակների մասին։

Ծանոթություն այն կարևորագույն հանքերի հետ, վորոնք մտնում են լեռնային տեսակների կազմի մեջ. ինքնածին տարրեր, սիլիկատներ. թթվածնային թթուների աղեր, ծծմբական, հալորդ, որդանական (կվարց, գաշտային շղաթ, փայլար, կալցիտ, դալոմիտ, աղատիտներ, գիպս, քարաղ, մետաղահանքեր)։

Լեռնային տեսակների դանազան ձևեր. հրաբխային, նըստվածքային, ձևափոխական (մետոմորֆիկ). նրանց կազմությունը։

Յերկրի կեղևի պատմությունը։ Յերկրիս վրա կյանքի պայմանների կրած փոփոխությունների համառոտ ուրվագիծը՝ ըստ երաների և շրջանների։

Բուսական և կենդանական ձևերի եվոլուցիան։ Մարդու հանդես դալը։

II. ԵՎՈՂՈՒՑԻՌՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ. ԵՎՈՂՈՒՑԻԱՅԻ ՈՒՂԻՆԵՐԻ ՊԱՐՁԱԲԱՆՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ (8 Ժամ)

1. Համեմատական-անատոմիական և բնախոսական մեթոդ։ Հոմալոգ և անալոգ որդանները և նրանց տարբեր նշանակությունը եվոլուցիայի ապացուցման դործում։ Համեմատական անառոմիան և որդանիքմների կազմության միասնական պլանի հարցը։ Մնացորդ (ռուղիմենտ) որդանները և նրանց նշանակությունը։ Անցման ձևերը և նրանց եվոլուցիայի համար ունեցած նշանակությունը (պերիպատուս, պրոտոպատերուս)։

Բնախոսական ապացուցներ (արյունը և զուգավորումը վորությունող՝ ձևերի մոտիկ ազգակցությունը վորոշելու դեպքում)։

2. Սաղմարանական մեթոդ։ Վողնաշարավորների սաղմերի համեմատությունը։ Սաղմային զարգացման վաղ աստիճանների նմանությունը վորակում ամբողջ որդանական աշխարհի մի ընդհանուր ծագում ունենալու ապացուցներից մեկը։ Մյուլեր-Հեկ-կելի բիոդենետիկ որենքը (կանոնը) և նրա արժեքավորությունը անհատի և տեսակի զարգացման կապն ըմբռնելու համար։ Այս կանոնի գերազնահատումը և նրա մեջ անհրաժեշտ ուղղումներ մտցնելը (ցնողգենեղ կամ սաղմային հարմարումներ, միևնուրն որդանի փունկցիայի փոփոխությունները՝ միջավայրի պայմանների փոփոխության հետեւանքով և այլն)։ Ստորև կազմություն ունեցող կենդանիները բարձրագույն ձևերի կենդանի նախնիները չեն, այլ միայն ընդհանուր նախորդի այն հեռավոր հետնորդները, վորոնք իրենց սեփական եվոլուցիան են անցել։

3. Հետաքանական մեթոդ։ Հնեարանությունը վորակում մեթոդություն եվոլուցիայի ուսումնասիրության։ Յերկրաբանական հեռավոր ժամանակների կենդանական ձևերի կազմությունների պարզությունը և նրանց աստիճանական բարգացումը։ Ժամանակակից ձիու նախնիների ձևերի հնեարանական շարքերը (Եոհիպուտա-պլեոհիպուտուս)։ Բրածո հավաքական և անցման ձևեր (պալեոթերիաներ՝ գետակինների, ունդեղյուրների և ձիերի (պալեոթերիաներից արխեոպատերիքուս))։ Հատկանիւնները (թռչուններով, թռչուններից արխեոպատերիքուս)։

4. Կենսաաշխարհագրական մեթոդ։ Կենդանաաշխարհական շրջանները։ Նրանց փառնայի բնույթը։ Կենդանիների աշխարհական բաշխման եվոլուցիոնական մեկնարանումը։ Ովկիանուագրական բաշխման կազմակերպությունները։ Ֆառնայի և ցամաքային կզղիների կենդանիները։ Ֆառնայի և ֆլուուային փոփոխությունների և որդանիքմների եվոլուցիայի։ Բաբանական փոփոխությունների և որդանիքմների պահանջման նշանակությունը մենապատկերում։

III. ՓՈՓՈԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՃԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՅԵՂԱԾ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(12 Ժամ)

Փոփոխականությունն ու ժառանգականությունը վորպես
միենուն պրոցեսի յերկու կողմերը:

Փոփոխականության տեսակները: Փոփոխականության ձեւերը՝ հասակային, սեռային, սեղոնային, բնախոսական: Փոփոխականության կորադիմը: Արտաքին գործոնների աղղեցությունը անհատական փոփոխականության վրա: Մողեքիկացիաների ժառանգականության խնդիրը: Տեսական մողեքիկացիաների աղղեցությունը և նրանց ճիշտ մեկնաբանումը: Մուտացիոն փոփոխականություն: Մուտացիաները բնության մէջ և նրանց որինաչփությունները: Արհետականորեն մուտացիաներ ստանալը և նրանց խոչոր նշանակությունը անասնաբուծության և բուսաբուծության պրակտիկայում: Մուտացիաների նշանակությունը եվլուցիայի պրոցեսում: Ուղղության բացակայությունը մուտացիոն պրոցեսում:

Մուտացիան-որդանիզմի ժառանգական բնույթի փոփոխությունն ե:

Ժառանգականության որինաչփությունների հայտնագործումը: Մենդելի՝ սիսեռի վրա կատարած փորձերը: Մենդելիզմը և քրոմոզոմային տեսությունը: Հասկացողություն դամետների մասին: Գամետների մաքրության հիպոթեզը: Ժառանգանիզմը: Որինաչփության բացատրությունը քրոմոզոմային տեսությամբ: Համոզիվությունների հասկացիությունը և հրանցությունը ձեւեր:

Մենդելի յերեք հիմնական կանոնները՝ հատկանիշների արիապետումը կամ դերակըումը, ճեղքումը, անկախությունը: Միջակա ձեւի ժառանգում: Մոնոհիբրիդ և դիհիբրիդ զուգավորում: Հասկացողություն գենների շղթայանքի և նրանց լոկալիզացիայի մասին քրոմոզոմների մեջ:

Հասկացողություն սեռի քրոմոզոմների մասին: Սեռի վորչման խնդիրը: Սեռի հետ կապված հատկանիշների ժառանգումը: Ժառանգականությունը մարդու մոտ:

Դենետիկան վորպես ժամանակակից ուսմունք ժառանգակա-

նության մասին: Հասկացողություն ֆենոտիպի և գենոտիպի մասին: Հասկացողություն մաքուր դժերի մասին: Մաքուր գըծերի նշանակությունը անասնաբուծության և բուսաբուծության պրակտիկայում: Գենետիկան վորպես սելեկցիայի տեսական հիմունք: Խորհրդային սելեկցիոն կայանների նվաճումները անասնաբուծության և բուսաբուծության բնագավառում: Բնտրությունն ու հիբրիդացիան վորպես ըուսական և կենդանական նոր ձեւեր ստանալու մեթոդներ, ժամանակակից գենետիկայի գրույթների սխալականությունը և այլն: Գենետիկայի և սելեկցիայի դերը եվոլյուցիոն պրոցեսի հիմնավորման գործում: Փոփոխականությունն ու ժառանգականությունը վորպես եվլուցիոն պրոցեսի հիմնական նախագրյալներ:

IV. ԵՎՈԼՈՒՑԻՈՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ. ԵՎՈԼՈՒՑԻՈՆ ԳԻՐՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԲԻՈԼՈԳԻՅԱՅԻ ՄԵՋ ՄԻՆՉԵՎ ԴԱՐՎԻՆ (6 Ժամ)

Կենդան բնության անփոփոխության մասին յեղած կրոնագան-դոգմատիկական պատկերացումների արտացոլումը բիոլոգիայի մեջ:

Կ. Լիննեյը և նրա «Բնության սիստեմը»: Ժ. Կյուվիեն և նրա ուսմունքը կենդանիների կազմության չորս պլանների մասին, տեսակների կայունության մասին և այլն: Կյուվիեյի և Որբինյիի կատաստրոֆների տեսությունը՝ վորպես քողարկումն ու բարերականության և աշխարհի աստվածային ստեղծագործության հավաքի: Զ. Դարվինի նախորդները՝ Ժ. Լամարք և Ֆայեն Ժ. Ստ. Իւերը: Լամարքի ուսմունքի հիմնական դրույթները: Վիտալիստական և մեխանիստական կողմերը նրա ուսմունքը՝ մունքի մեջ (ձգտումն աստիճանականության (գրադացիայի), ձեռքբերովի հատկանիշների ժառանգումը և անհատական ջանքերի դերը): Ստ. Իւերի և Կյուվիեյի վեճը և նրա հետեվանքները: Պարիս— և մեխանուրամարկիստները բուրժուական բիուգիայի մեջ: Մեխանուրամարկիստների վնասակար դերը անասնաբուծության և բուսաբուծության պրակտիկայում: Անկարեցիությունը, եվոլյուցիան լոկ միայն փոփոխականության վեցածելը թեկուզ և ժառանգական:

Դարվինի կենսադրությունը: Զ. Դարվինի աշխատությունների յերկան գալը պայմանավորող պատմական և սոցիալ-տնտեսական նախադրյաները: Դարվինը վորպես 19-րդ դարի կիսեանդիական արդյունաբերող բուրժուազիայի գաղափարախոսության արտահայտիչը:

Դարվինիզմի հիմունքները: Դարվինի ժամանակաշրջանի գյուղատնտեսության պրակտիկայի մեթոդներն ու նվաճումները վորպես «Տեսակների ծաղման» գլխավոր հենակետներից մեկը:

Արհեստական ընտրությունը և նրա նշանակությունը տեսակների ծաղման խնդրի լուծման գործում: Որդանիզմների բազմացման պրոցեսիան և կենդան եյակների մասսայական վորպեցումը: Գոյության կոչիլը, առավել հարմարվածների վերակեցությունը: Գոյության կոմի տարրեր ձեւերը և բնական ընտրությունը:

Փոփոխականությունն ու ժառանդականությունը վորպես եվոլուցիայի հիմնական գործոններ: Արհեստական ընտրության եյական տարրերությունը բնական ընտրությունից: Արհեստական բնարությունը և ընտանի կենդանիների ու կուլտուրական բույսերի ծաղումը:

Հատկանիշների հեռացման սկզբունքը վորպես արդյունք բնական ընտրության և միջակա ձեւերի մահացումը: Դիվերտնոցիայի գաղափարը բուսական և կենդանական աշխարհում և այսպես կոչված «եվոլուցիոն ծառերը»:

Եվոլուցիան և հարմարման յերկությը: Կենդանիների և բույսերի պաշտպանողական հարմարանքները, վորպես արդյունք դրույթյան կոմի: Որդանիզմների գոյության տարրեր պայմաններին տիպական հարմարման որինակներ՝ պաշտպանողական և նախապատշական գունավորում, միմիկրիայի «սպառնալից» շարժում, «մահացման» ռեֆլեքս, պահպանական նմանություն և այլն:

Ծաղիկների և փոշոտում կատարող միջատների փոխարժամարդությունը: «Նպատակահարմարությունը» և Դարվինի նրան տված մատերիալիստական բացատրությունը վորպես ու-

ժեղագույն փաստարկում նրա կրոնական-մետաֆիզիկական մեկնաբանման և կենդան բնության մասին յեղած վիտավատական հայացքների գեմ: Սիմբոլոն ու պարագիտիզմը բնական ընտրության տեսության լուսաբանությամբ: Նպատակահարմարության հարաբերական բնույթն որպանիզմների կազմության մեջ և նրա իր հակագործյան անցնելը՝ Փիդիկա-քիմիական և բիոլոգիական պայմանների փոփոխության ժամանակ: Ամենաբարձր կաղմաւթյունն ունեցող ձեւերի հետ մեկտեղ ամենապիմիտիվների հարատեման պայմանները և նեղ մասնավորված ձեւերի մահացումը: Նոր տեսակների ասալացումը վորպես արդյունք միջակա ձեւերի մահացման՝ փոփոխականության և հատկանիշների հեռացման առկայության ժամանակ:

Դարվինիզմի բուրժուատական սահմանափակությունը և Դարվինի ուսմունքի մետաֆիզիկական կողմերի (գոյության կորիզը վորպես բնության ընդհանրական որենք) քննադատությունը Մարքսի և Ենդելսի կողմից: «Թուիչքի» պրոբլեմը եվոլուցիոն ուսմունքի մեջ և նրա բացակայությունը Դարվինի տեսության մեջ: Պայքարը գարվինիզմի դեմ և նրա զասակարգային եյությունը բուրժուատական յերկրներում և նեղ մոտ Ռուսաստանում թյուրի 60-80-ական թվականներին:

Դարվինիզմի ոգտագործումը բուրժուատական գիտության կողմից՝ հիմնավորելու դասակարգային, ցեղային և աղդային ձընշումների որինականությունը:

Սոցիալական գարվինիզմը և նրա զասակարգային հիմնությը: Որդանական աշխարհում տեղի ունեցող եվոլուցիայի դարձը: Որդանական աշխարհում ունեղները սոցիալական յերեվույթների վիճան բիոլոգիական որենքները սոցիալականությունը: Մարքսիզմը դարվիքը փոխարեւու յետաղիմականությունը: Մարքսիզմը դարվիքը նիզմի հետ նույնացնելու դրույթների անթույլատրելիությունը:

Դարվինիզմի դնահատականը Մարքսի, Ենդելսի և Լենինի կողմից: Լենինը՝ վողջ գոյություն ունեցողի զարգացման մեջ կանոնական և գիտեկտիկ-մատերիալիստական կոնցեպցիայի խանիստական և անդհատի (թուիչքների) և անդհատի պրոբլեմը եվոլուցիոն պրոցեսում: Տեսակն ու փոփոխակը Դարվինի ըմբռումով:

Մարդու ծագումը վորպես սոցիալական պրոբլեմ։ Որուանական աշխարհի և մարդկային հասարակության եվոլուցիայի ու բնագների վորակական տարրերությունը։

Մարդու ծագումը կենդանական ստորին ձեւերից։ Համեմատական-անատոմիական, համեմատական-բնախռական (արյուն), սաղմաբանական և հոգեբանական տվյալները։

Մարդու և պրիմատների նմանությունն ու վորակական տարրերությունը։ Մարդու համեմատությամբ՝ մարդակերպ կապիկների գանդի, վողնաշարի, առաջին և յետին վերջավորությունների և այլն կազմության առանձնահատկությունները։

«Մարդկային կյանքի՝ հաղարավոր տարիների աշխատանքի չնորհիվ կատարելագործված ձեռքի» և «մարդուն նույնիսկ ամենից նման կապիկի անդարդացած ձեռքի» (Ենդելս) միջև յեղած վորակական տարրերությունը։ «Կապիկներից մարդու փոխարկման վճռական քայլը և կապիկների մարմնի ուղղաձիգ դիրքի անցնաման ժամանակ»։ «Առաջին վերջավորությունների աղատությունը վորպես արդյունք մարմնի ուղղաձիգ դրության անցման՝ հասրավորություն տվեց մարդու նախնիներին դրծիքներ արտադրել» (Ենդելս)։ Լեզվի ծագումը վորպես արդյունք մարդու աշխատանքային գործունեյության հասարակական ձեւերի։ Մարդու լեզուն ու մատածողությունը և նրանց եվոլուցիան աշխատանքի պրոցեսում։ «Չեռքի, լեզվի որդանների և ուղեղի միաւտեղ աշխատանքը մարդու նախնիների հասարակական կյանքի պայմաններում, վորպես աշխատանքային բարր ողբերացիաներ կատարելու, մեծ նպատակներ դնելու, և նրանց հասնելու համար ընդունակություն ձեռք բերելու պատճառ։

Բրածու մարդը և նրա առնչությունը ժամանակակից մարդուն։ Պիտեկանթրոպուսը, վորպես մարմնի ուղղաձիգ դիրքին անցած մի ցեղ։ Սինանթրոպը վորպես մարդացման հետագա աստիճան։ Հայդելբերգյան ցեղը։ Նեանդերթալյան ցեղը։ Նախամարդու տեխնիկան, նրա առաջացումը, զարգացումը և ազգեցությունը մարդու եվոլուցիայի վրա։

Կրոմանյոնյան ցեղը վորպես ժամանակակից «բնական մար-

դու» բրածու ձեւը։ Կրոմանյոնյան ցեղի կուլտուրան։ Մարդու հայրենիքի հարցը և նրա Փիլոդենիայի վիճելի մամնաները։ Մարդու ծագման պոլիֆիլետիկ պատկերացումների ոգտագործումը կրոնական-դասակարգային և ազգային նպատակներով։ Դարվինի հայացքները մարդու ծագման վերաբերմար, վորպես արգյունք իդեալիստական աշխարհայացքի արտացոլման նրանց մեջ և աշխատանքի գերի անդիտացման։ Բուրժուատիայի և յեկեղեցու պայքարը մարդու ծագման խնդրի զիտական լուսաբանման դեմ։

VII. ԿՅԱՆՔԻ ԾԱԳՈՒՄԸ ՑԵՐԿՎԻ ՎՐԱ (4 ժամ)

Կյանքի ծագումը եվոլուցիայի կարևորագույն թեման է։ Նրա հակակրոնական նախակությունը։ Համառոտ ակնարկ հարցի դրվածքի պատմության։ Պանսպերմիայի հիպոթեզը, նրա վիտալիստական եյությունը և սնանկությունը։ Կենդանիի և անկենդանի միջև բացարձակ սահման դնելու ձգտումը վորպես տերմերականության պաշտպանություն գիտության մեջ։ Կյանքի ծագման մեխանիստական հիպոթեզը։ Ինքնածնության մասին յեղած հայացքների վարդացման պատմությունը։ Պաստյորի բակտերիաների վրա կատարած փորձերի ունեցած նշանակությունը հարցի գիտական դրվածքի մեջ և պրակտիկ կյանքում։ Պատոյորի փորձերի լայնորեն մեկնաբանման անթույլատրելիությունը։ Ինքնածնության տեսության հիմնական դրույթները դիմեկտիվական մատերիալիզմի տեսակետից։ Կյանքի սպեցիֆիկությունը։ Պարզ որդաննիզմների յերևան դալը վորպես նոր վորպակի առաջացում մատերիայի եվոլուցիայի մեջ։ Սկզբնական որդաննիզմների ձեւաբանական և բնախռական բնույթի սպեցիֆիկությունը։

Այժմյան որդաննիզմները վորպես արդյունք որդանական ձեւերի զարգացման պատմական յերկարատև պրոցեսի։ Սկզբնական որդաննիզմների և ամժաման պարզագույնների նույնացման անձնությունը։ Կյանքի ծագման վիտալիստական և մեխանիստական հարցադրման դեմ պայքարի անհամեշտությունը։ Կյանքը՝ մատերիայի պատմական զարգացման և նրա նոր վորպակի

արդյունքն է: Մահը վորպես կյանքի եյական մոմենտ: Կյանքն ու մահը վորպես հակասությունների միասնություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսանողների համար

1. *Տիմիրյաղեվ, Զարլըզ Դարվինը և նրա ուսմունքը. Պետչրատ:*

2. Сборник „Происхождение животных и растений“. Под ред. Зернова. Гиз, 1928 г.

3. Вишневский, Происхожд. и древность человека. 1929 г.

4. Ենգելս, Աշխատանքի դերը կապկի մարդացման պրոցեսում, (գետեղված ենգելսի «Բնության դիալեկտիկան» գրքի մեջ, Հայկուսրատ):

5. Сборник под ред. Валесколи и Токиня „Учение Дарвина и Марксизм—Ленинизм“, изд. 1932 г. (к 50-летию со дня смерти Дарвина).

6. Цузмер, Эволюционное учение. Гиз. 1931 г. (վոչ բուրգ գլուխները):

7. Բելյայեվ. Եվրոպիոն ուսմունք, 1936թ., Պետչրատ:

ԴԱՍԱՑՈՒՅԹԻ ՀԱՄԱՐ

1. Լենին.— Մատերիալիզմ և եժապերիոկրիտիզմ, Հայկուսրատ:

2. Ենգելս.— Անտի-Դյուրինգ, Հայկուսրատ:

3. Ենգելս.— Լյուդվիկ Ֆոյերախ, Հայկուսրատ:

4. Ենգելս.— Բնության դիալեկտիկան, Հայկուսրատ:

5. Դարվին.— Տեսակների ծաղումը. Պետչրատ, 1937թ.:

6. Յոլլես¹⁾, Дарвинизм, изд. 1898 г.

7. Կօզօ-Պօլյանսկիй¹⁾, Введение в Дарвинизм.

8. Сборник¹⁾, „Марке, Энгельс, Ленин о биологии“ 1933 г.

9. Северцов¹⁾, Этюды по теории эволюции. Гиз. 1923 г.

10. Синнет и Ден¹⁾, Курс генетики, Медгиз. 1931 г.

11. Փիլիպչենկո¹⁾, Генетика, Гиз. 1931

12. Дарвин¹⁾, Происхождение человека и половой подбор (со статьей Мензбира) Гиз.

13. Шипկ¹⁾, Расовая проблема и Марксизм, 1930.

14. Опарин, Происхождение жизни.

15. Азимов, Происхождение жизни.

16. Бугаев¹⁾ К вопросу об исторических предпосылках Дарванизма.

17. Филопченко¹⁾ Эволюционные идеи в биологии.

18. Журнал „Природа“ за 1932 г. №№ 6—7. 11—12.

19. Гремяцкий, К проблеме расовых различий („Естествознание и Марксизм“ 1929 г. № 2).

20. Завадовский¹⁾. Динамика развития. 23. Шелл, Общая биология.

21. Некрасов, Борьба за Дарванизм. Гиз.

22. Յուզմեյան, Եվրոպիոն տեսություններ. 1933թ.

¹⁾ Եշված գրքերն անհրաժեշտ են նկատված ձանոթության համար:

ՄԱՐԴՈՒ ԱՆՑՏՈՄԻԱՆ ՅԵՎ ՖԻԶԻՌՈՂԻԱՆ^{*)}

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Անատոմիայի և ֆիզիոլոգիայի դասավանդումը նպատակ տնի՝

1) Տալ փաստական և տեսական կոնկրետ գիտելիքներ անառաջի և ֆիզիոլոգիայի բնագավառից :

2) Տալ մեթոդոգիորեն ճիշտ ըմբռնում որդանիզմի մեջ կատարվող պրոցեսների մասին :

3) Շաղկապել ստանալիք գիտելիքները աշխատանքի կաղմական և արտադրողականության բարձրացման պրոբլեմների հետ՝ դպրոցական և արտադրական պայմաններում :

4) Դասընթացի նյութի յուրացման միջոցով նպաստել խելացի մոռեցում ունենալու մանկավարժության, դպրոցական առողջապահության, ֆիզկուլտուրայի և այլն դանադարն հարցելին:

Դասընթացի նյութն ընդհանուր առմամբ համապատասխանում է միջնակարգ դպրոցի ուսման ութերարդ տարվան։ Այդ ծրագրից աննշան շեղումները բացարձում են այն հանդամանքն հաշվառմամբ, վոր սովորողները տարրական դպրոցի ապագա մանկավարժներ են լինելու։

Ներածական դրույցին յերկու ժամից ավելի չափաբար համապատասխանում է միջնակարգ դպրոցի ուսման ութերարդ տարվան։ Այդ ծրագրից աննշան շեղումները բացարձում են այն հանդամանքն հաշվառմամբ, վոր սովորողները տարրական դպրոցի ապագա մանկավարժներ են լինելու։

«Բջիջ և հյուսվածքներ» հատվածին հատկացված վեց ժամը հնարավորություն է տալիս ուսանողներին ծանոթանալու նյու-

*). Ռուսենից թարգմանել և հայերեն թարգմանությունը լսմբագրել ե պրոֆ. Ավ. Տեր-Թողոսյանը։

թի հետ նաև գործնականորեն (որինակ՝ գիտել միկրոսկոպի տակ այս կամ այն հյուսվածքը)։ Հատվածի յեղբափակող կետը ընական անցումն է հանդիսանում հաջորդ հատվածին։ «Արյան շրջանառություն» հատվածում կարելի յէ հիշատակել մեկուսացված որդանների մասին՝ թեկուղ և սրտի աշխատանքի ուսումնասիրության կապակցությամբ (հասկացողություն սրտի աշխատանքի ավտոնոմության մասին)։

«Ծնչառություն»— (3 ժամ) հատվածում վերջին պարբերությունը կարող է իրբև նյութ ծառայել միայն շատ կարծ յեղբափակող զրույցի համար։

«Մնդառություն»— (8 ժամ) հատվածում հատուկ ուշադրություն դարձնել այն մոմենտների վրա, վորոնք մեծ մասամբ բավականաչափ չեն ըմբռնվում սովորողների կողմից, այսինքն՝ «այրումը», թթվաւմը մարսողության խողովակում չի կատարվում և ստամոքսը չի կարելի համեմատել մեքենայի ջերմացման հետ։ պետք է տալ Փիզիոլոգիական ճիշտ պատկերացում ներծըծման մասին։ զանազան աշխատանքների ժամանակ տեղի ունեցող եներգետիկական ծախսումների հարցը չի կարելի կապել վոչ աշխատանքի զնահատության և վոչ ել հոգնեցնողության հետ, և այստեղ պետք է կրկնակի հոգ տանել նյութի ճիշտ լուսաբանման մասին։ Շրջանառության, չնչառության և սննդառության որդանների գործունեյության ծանոթությունը հնարավորություն է տալիս ավելի խորը մոտենալու մկանային գործունեյության հարցերին, ահա թե ինչու «Վոսկը մկանային սիստեմ» հատվածը դրված է վերոհիշյալ հատվածներից հետո։ Մկանային աշխատանքի քիմիկմի մասին կետը պետք է սովորողներին բերի այն պատկերացմանը, թե մկանային աշխատանքը Փիզիոլոգիական պրոցես է և թե չի կարելի այն համեմատել մեքենայի աշխատանքի հետ։ Կարևոր է նշել, վոր մկանային գործունեյության հիմքում ընկած են վոչ թե թթվեցնող պրոցեսներ, այլ նյութերի փոխանակման մի շարք բարդ պրոցեսներ։

«Արտաթորման պրոցեսները»— (2 ժամ) շատ կարծ հատվածին հետևում է դասընթացի կենտրոնական հատվածը՝ «Նյարդային սիստեմը» (14 ժամ)։ Այս հատվածը կենտրոնական է հանդապահության սիստեմը։

գիսանում այն պատճառով, վոր ապագա մանկավարժներին նյարդային սիստեմի գիտությունը շատ անհրաժեշտ է: Այս հատվածը պետք է աժանդակի գիտակցարար կառուցելու մանկավարժական պրոցեսը գպրոցում և հմտորեն պահպանելու կարգապահությունը դասարանում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով ժամերի քանակը և սովորողների ընդհանուր պատրաստության աստիճանը, այս հատվածը 1933 թ. ծրագրի հետ համեմատած՝ բավականաչափ պարզեցված է:

«Երեքին սեկրեցիա» հատվածին հատկացված է 4 ժամ:

Հետեւալ հատվածը՝ «Եյութերի փոխանակությունը մարդկային օրդանիղմում» հանրավորություն և տալիս հանրագումարի քերել նյութերի փոխանակման հարցերին վերաբերյալ կուտակված ցրիվ նյութը: Կոպիտ սխալ և հանդիսանում այն պատկերացումը, թե նյութերի փոխանակությունը վոչ այլ ինչ է, յեթե վոչ չնչառություն, շրջանառություն, սննդառություն և արտաթրություն՝ միասին վերցրած: Նյութերի փոխանակության տակ պետք է հասկանալ ասիմիլատորական և դիսիմիլատորական կարգի պրոցեսների այն վողջ ամբողջությունը, վորոնք կատարվում են մեր որդանիղմի յուրաքանչյուր բջջի, յուրաքանչյուր հյուսվածքի, յուրաքանչյուր որդանի մեջ: Նյութերի փոխանակության պրոցեսների համար նյարդային սիստեմի և ներքին սեկրեցիայի գեղձերի գործունեյությունը պակաս կարեռ նշանակություն չունեն, քան արյան շրջանառությունը, չնչառությունը և սննդառությունը: Ահա թե ինչու համար այդ հատվածը պետք է զնել դասընթացի վոչ թե միջում, այլ սկզբում կամ թե վերջում՝ մարմնի բոլոր որդաններն անցնելուց հետո:

«Անող որդանիղմի ֆիզիոլոգիան» հատվածը (4 ժամ) վոչ միայն ընդհանուր պատկերացում պիտի տա մարդու սազմային և արտարգանդային զարդացման մասին, այլև զուղընթացարար հանրագումարի բերի այն ցան ու ցրիվ նյութը, վոր վերաբերում և մանկական, առավելապես դպրոցական հասակի անատոմիական-ֆիզիոլոգիական առանձնահատկություններին:

Յեղափակող հատվածում (4 ժամ) աշխատանքի կազմակերպման և ռացիոնալացման հետ կապված հարցերը պետք են վոչ միայն ընդհանուր ձևով, այլև դաստիարակական-

մանկավարժական այն խնդիրների համեմատ, վոր կանդնած և՛ դպրոցի առաջ:

Ժամերի խիստ սահմանափակ թիվը հարկադրում են հատուկությամբ վերաբերյալ մատուցվող նյութի թե ծավալին և թե բնույթին: Անհրաժեշտ համարելով դասավանդումը տանել ըստ մարդա-լենինյան մոթողոլոգիական պարզությունը դրույթների, սակայն վոչ մի գեղձում այն չպետք է վերածել մերկ մեթոդոլոգիականության: Նյութի ճշգրիտ լուսաբանումը նախ և առաջ վնասակար պարզացումներից խուսափելու և: Այսպես որինակ, խոսելով յերիկամների աշխատանքի մասին, պետք է խուսափել յերիկամները քամիչների հետ համեմատելուց, պետք է մատնանշել, վոր մեղի գոյացումը նախ և առաջ յերիկամային հյուսվածքի ակտիվ գործունեյության արդյունքն է հանդիսանում ճշշտ այնպես, ինչպես թքի զատումը թքագեղձի հյուսվածքի գործունեյության արդյունքն է: Բարձրագույն ներվային գործունեյության ուսումնասիրության ժամանակ դարձյալ պետք է պարզուն ուրվագեցել պայմանական ոեֆլեքսների գերը՝ աշխատանքային և կենցաղային ունակությունների մշակման զործում, ցույց տալով, վոր բանն այստեղ միայն պայմանական ոեֆլեքսների մեջ չե, վոր վոչ թե պայմանական ոեֆլեքսները, այլ գիտակցությունն է վորոշում մարդու վարքը:

Ինքնին հասկանալի յե, վոր այս բոլոր գեղձերում պետք է խոսել այն մասին, թե ուր և տանում մեղ սիստեմ (մեխանիստական կամ վիտալիստական) գրույթը՝ յուրաքանչյուր տվյալ յերեվույթի մոտեցման ժամանակ:

Ծրագրում գիտմամբ մոթողոլոգիական մամենուները դրված են դասընթացի հենց բովանդակության մեջ, նյութի ընտրության մեջ, նրա դասավորության մեջ և վոչ մեծախոսությունագրերի ձևով, վարպեսզի մանկավարժը չգայթակղվի ու չսահմանափակվի միայն ցուցանակներով և դրանով ել հանդստան:

Դասավանդման ժամանակ՝ լայնորեն ողտվելով գրույթի պրեպարատների, մուլյաժների, մողելների, տախտակների և այլն ցուցադրումներով, չպետք է տարպել սակայն դործնական ինքնուրույն աշխատանքների մեծ քանակով, վորովհետեւ որա-

Համար ժամանակ չկա: Կը շելի յե տալ սովորողներին առավելապես այնպիսի գործնական աշխատանքներ, վորոնք կարող են նրա համար ուժակար լինել ապագա աշխատանքների ժամանակ տարրական դպրոցում: Որինսկ. 1. «Բջիջ» հատվածի ուսումնասիրության ժամանակ պետք է միկրոսկոպիական աշխատանք դնել՝ կենդանի հյուսվածքներ դիտելու համար. 2. «Արյան շրջանառություն» հատվածում լաբորատորական աշխատանք պետք է կատարել՝ «Արյան շարժումը գորափ թաթի մեջ»: 3. «Շնչառություն» հատվածում փորձ պետք է անել սպիրոմետրով և արտաշնչած գաղերի անալիզ կատարել. 4. «Սննդառություն» հատվածում գործնական աշխատանք դնել՝ «Գտիալինի ազդեցությունն ուսւայի վրա»: 5. «Վոսկրա-մկանային սիստեմ» հատվածում անցկացնել գործնական պարապմունքներ կմախքի վերաբերյալ և այլ աշխատանքներ:

ԾՐԱԳԻՐ (60 ԺԱՄ)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 Ժամ)

Մարդու անառոմիան և ֆիզիոլոգիան վորպես գիտություն, վորն ուսումնասիրում է մարդկային օրգանիզմի կազմությունն ու գործունեյությունը: Մարմնի կազմության ուսումնասիրության նշանակությունը կենսական գործառնություններն ըմբռնելու համար: Ֆիզիոլոգիայի՝ վորպես գիտության՝ գործնական (պրակտիկ) ակունքները: Եկապերիմենտն ու գիտողությունը վորպես ֆիզիոլոգիայի ուսումնասիրության հիմնական մեթոդներ: Անառոմիայի և ֆիզիոլոգիայի նշանակությունը պոլիտեխնիկացիացի մանկավարժի համար:

Մարդու և կենդանիների նմանությունն ու տարրերությունը: Գործիքների արտադրությունն ու գործադրությունը, վորպես մարդու տարրերիչ դիճ: Աշխատանքը մարդկային կյանքի հիմք: Աշխատանքի ազդեցությունը որդանիզմի վրա:

Բջիջ և հյուսվածքներ (5 Ժամ)

Համառոտ տվյալներ բջիջային ուսմունքի զարգացման պատճության մասին: Բջջի կազմությունը: Կորիզի և պրոտոպլազ-

մայի գերը բջջի մեջ: Բջիջների բաժանումը: Կարիոկինեզ:

Կենդանական հիմնական հյուսվածքները (եղիթելային, շարակցական, (կոճիկային, վոսկրային), մկանային, նյարդային): Արյունն ու ավիշը վորպես միջավայր բջիջների ու հյուսվածքների համար:

Արյան շրջանառություն (6 Ժամ)

Արյան շրջանառության նշանակությունը: Արյան բաղադրությունը: Արյան մարմնիկները և նրանց նշանակությունը: Պլազման, նրա բաղադրությունն ու հատկությունները: Արյան մակարդման նշանակությունը: Արյան պաշտպանողական հատկությունները: Հասկացողություն իմմունիտետի մասին:

Արյան և ավիշի շրջանառության ընդհանուր սքեմը: Զարկերակներ և յերակներ: Մազանոթների նշանակությունը: Ավշի գոյացումը: Սրտի կազմությունը: Սրտի աշխատանքը և որդաների արյունով լցվելը որդանիզմի հանգստի և տարրեր գործունեյության ժամանակ: Սրտի և անոթների աշխատանքի կանոնավորումը: Սրտի մարզանքի նշանակությունը: Սրտի գերհոգնությունը և նրա կանխման միջոցները:

Շնչառություն (3 Ժամ)

Շնչառության որդանների կազմությունը: Շնչառության որդանների կազմության այն առանձնահատկությունները, վորոնք սառն ողը, փոշին, միկրոբները՝ թոքերն ընդունելու գեմ՝ որդանիզմի նախապահպանման համար նշանակություն ունեն: Շնչառական շարժումների մեխանիզմը: Արհեստական շնչառություն: Գաղերի փոխանակումը ողի և արյան միջև: Գաղերի փոխանակումը հյուսվածքների մեջ: Շնչառության որդանների աշխատանքը՝ որդանիզմի տարրեր գործունեյության ժամանակ: Հասկացողություն թոքերի կենսական տարրողության մասին: Շնչառության կանոնավորումը:

Առողջ ողը վորպես արդյունավետ արտադրական աշխատանքի պայմաններից մեկը: Թունավորում շնչառական որդանների միջոցով: Թաղմական թունավորող նյութեր:

Սննդառության նշանակությունը: Մնունդը վորպես եներգիայի աղբյուր, վորպես որդանիզմի շինանյութ: Մարսողության դերը: Մարսողության որդանների կազմության ընդհանուր պլանը: Մարդու և այլ կաթնասունների մարտության որդանների կազմության առանձնահատկությունները՝ կապված սննդառության բնույթի հետ: Մարսողական գեղձեր: Մարսողական ուղու ֆերմենտները: Սննդի առաջխաղացումը և նրա փոփոխությունները մարսողական ուղու տարբեր մասերում: Հասկացողություն կենդանիների և մարդու մարսողական գեղձերի աշխատանքի ուսումնակիրության մեթոդների մասին:

Նյարդային և հումորալ մեխանիզմների նշանակությունը մարսողական ուղու գործունեյության կանոնավորման մեջ:

Սննդարար նյութերի ծումը: Ծծված նյութերի հետազա վիճակը: Լյարդը և նրա գերը որդանիզմի մեջ: Սննդամթերքների հիմնական խմբերը, նրանց բաղադրությունը, սննդարար արժեքը: Վիտամինները և նրանց նշանակությունը: Հասկացողություն սնման նորմաների մասին: Մարդկային որդանիզմի եներգիայի որական ծախսը: Մտավոր և Փիզիկական աշխատանքի ժամանակ ծախսված եներգիան: Սնման վորակական կողմի հարցը: Աճող որդանիզմի սննդառությունը:

Սննդանյութերի տեխնիքական և խոհարարական մշակման նշանակությունը: Սննդառության առողջապահության ֆիզիոլոգիական հիմունքները: Հանրային սնունդը սնման առողջացման և ռացիոնալիզացման ուղին ե:

Վոսկրամկանային սիստեմ (7 ԺԱՄ)

Վոսկրամկանային սիստեմը վորպես մարդու բանող ապարատ: Վոսկրների բաղադրությունն ու կազմությունը: Կմախչի կազմությունը: Մարդու կմախչի կազմության մեջ յեղած առանձնահատկությունները՝ մարմնի ուղղաձիգ գիրքի կասպակցությամբ: Վոսկրների շարժուն և անշարժ միացումները: Մըկանների ամրակցումը վոսկրներին: Վոսկրների միացումը կոտըրվելուց հետո:

Մկանների կազմությունը: Կծկունակությունը վորպես մըկանների հիմնական հատկություն: Հասկացողություն մկանային աշխատանքի քիմիզմի մասին: Մկանի հողնությունը: Ոիլթմի և բեռնակորման նշանակությունը մկանների աշխատանքի ժամանակ: Մկանների նորմալ գործունեյության պայմանները (թթվածնի, սննդանյութերի մատակարարում, քայլայման արդյունքների հեռացում): Աշխատանքի ժամանակ մարմնի հարկադրական գիրքի ազդեցությունը վոսկրամկանային սիստեմի և ամբողջ որդանիզմի վրա: Ֆիզիկուլտուրա, մարզանք, սպորտ:

Արտաքրման պրոցեսները (2 ԺԱՄ)

Նյութափոխության վերջնական արդյունքները և նրանց արտաքրումը: Յերիկամների կազմությունը և մեղի գոյացման պրոցեսը: Միզահան որդանները:

Մաշկի կազմությունը: Մաշկը վորպես արտաթորման և ջերմականոնավորիչ որդան: Մաշկի միջոցով որդանիզմի մեջ թափանցող թույներ: Մաշկի միջոցով ներդործող ռազմական թունավոր նյութեր:

Նյարդային սիստեմ (14 ԺԱՄ)

Նյարդային սիստեմի կազմության ընդհանուր պլանը: Հասկացողություն նեյրոնի մասին: Նյարդային հյուսվածքի հատկությունները (գրդռականություն և հազորդականություն): Վողնուղեղի կազմությունը: Ութիւքսային ուղեղ: Վողնուղեղային ուղեղ:

Գլխի ուղեղը (գանգուղեղ): Գլխի ուղեղի կազմության առանձնահատկությունները զանազան վողնաշաբաթորների մոտ: Գլխի ուղեղի տարբեր մասերի գեղը: Յերկայնաձիգ ուղեղ, ուղեղի բունն իր ամբողջությամբ, փոքր ուղեղ, մեծ կիսանդեր): Հասկացողություն բարե ութիւքսների մասին: Շարժումների կոորդինացիան (համակարգումը): Պատկերացում բնազդների մասին, վորպես բարե ութիւքսների հասկացողություն վեղեսաւատիվ նյարդային սիստեմի մասին:

Ուղեղի մեծ կիսաղնղերը վորպես բարձրադույն նյարդա-
յին գործունեյության որդաններ : Պայմանական ռեֆլեքսներ :
Պայմանական ռեֆլեքսների մշակումը : Պայմանական ռեֆլեքս-
ների արդելակման յերեվույթները : Պայմանական ռեֆլեքսների
նշանակությունը կենդանու կյանքում :

Մարդու բարձրագույն նյարդային գործունեյությունը : Պայ-
մանական ռեֆլեքսների նշանակությունը՝ աշխատանքային ունա-
կություններ մշակելու գործում : Գիտակցության դերը՝ աշխա-
տանքային ունակություններ մշակելու գործում : Մտածողու-
թյունը վորպես մարդու նյարդային գործունեյության բարձրա-
գույն արտահայտություն : Մարդու կիտակցության սոցիալական
օլոյմանակորմածությունը : Համառոտ տվյալներ բարձրագույն
նյարդային գործունեյության ուսմունքի պատմությունից :

Յերեխայի բարձրագույն նյարդային գործունեյության դար-
դացումը : Պայմանական ռեֆլեքտորային գործունեյության ա-
ռանձնահատկությունները մանկական հասակում : Հասկացողու-
թյուն բարձրագույն նյարդային գործունեյության տիպերի մա-
սին :

Զդայաբանները և նրանց նշանակությունը : Տեսողության
որդաններ : Յանցենին վորպես նյարդային ընդունող ալարաս .
Լսողության որդան : Կորայան որդանի դերը : Հոսառառության,
ճաշակի , չոշափելիքի որդանները : Հողա-մկանային զդայու-
թյուն :

Ներգատուցքներ (ներքին սեկրետիս , 4 ժամ)

Որդանների միջև յեղած քիմիական կապը : Հասկացողու-
թյուն ներգատական գեղձերի մասին : Վահանաձև գեղձ , թիմուս
(Յօնայա յելեզա) ուղեղի հավելվածներ , մակյերիկամներ , սե-
ռական գեղձեր : Ներգատական գեղձերի հեռացման և պատվաս-
տի վորձերը կենդանիների մոտ : Մանկական հասակի ներգա-
տումների առանձնահատկությունները : Ներգատական գեղձերի
ուսումնասիրության բնադավառում ձեռք բերված նվաճումները
և նրանց գործնական նշանակությունը անասնաբուժության և
բժշկության մեջ :

Նյութերի փոխանակումը մարդկային որգանիզմի մեջ
(2 ժամ)

Նյութերի փոխանակման ընդհանուր պատկերը որդանիզմի
մեջ : Ասմիմիլացիան և դիսիմիլացիան վորպես փոխադարձ-հա-
կադիր պրոցեսներ . նրանց միասնությունը՝ նյութերի և եներ-
գիաների փոխանակման եյությունն և հանդիսանում որդանիզմի
մեջ : Ֆերմենտների գերը նյութերի փոխանակման պրոցեսում :
Նյութերի ընդհանուր փոխանակման վորոշման հիմնական մի-
ջոցները որդանիզմի մեջ : Խանգարմունքը որդանիզմի մեջ՝ կաղ-
ված նյութերի փոխանակման խանգարման հետ : Նյարդային և
հումորալ ներդոլծությունները նյութերի փոխանակման վրա :

Անող որգանիզմի ֆիզիոլոգիան (4 ժամ)

Մարդու զարդացման դլմավոր շրջանները :

Ներգալանդային կյանքը : Սեռական բջիջները : Սաղմի զար-
գացումը : Մարդու և կենդանիների սաղմի զարդացման առաջին
աստիճանների նմանությունը :

Մանկական որդանիզմի զարդացումը : Հասունացման շրջա-
նը : Վուկրա-մկանային , սրտա-անոթային , նյարդային սիստեմ-
ների հասակային (տարիերային) առանձնահատկությունները :
Սնումը մանկական և դեսատի հասակում :

Հասկացողություն յերեխաների և գեռաստիների առողջու-
թյան պահպանման մասին :

Յեզրակացություն (4 ժամ)

Մարդու որդանիզմի մեջ կատարվող պրոցեսների ըմբռնման
նշանակությունը՝ աշխատանքի և կենցաղի կազմակերպման հա-
մար : Աշխատանքի կապիտալիստական և սոցիալիստական ուս-
ցիոնալիզացիան : Հոգնածության յերեվույթների բարդությու-
նը : Աշխատանքի եներդետիկական գնահատման և հոգնածու-
թյունը որդանիզմի մի վորեե Փունկցիայի փոփոխությամբ բա-
յտորելու անթույլատրելիությունը : Նյարդային սիստեմի դերը

Հողնածության յերելու թների զարդացման դործում։ Հողնածության պրոբլեմի դրվագքը և պայքարը նրա գեմ բուրժուական յերկրներում և ԽՍՀՄ-ում։

Գիտակցության ազգեցությունը որդանիվմի Փիզիոլոգիական դրության և աշխատունակության վրա։ Հետաքրքրություն դեպի աշխատանքը։ Աշխատանքի խմաստավորված լինելու նշանակությունը։

Աշխատանքային շարժումները։ Ռիթմի և բեռնվածության նշանակությունը աշխատանքի մեջ։ Աշխատանքի ճիշտ ձևերի յուրացումը։

Աշխատանքի և հանդսոտի կանոնավոր հաջորդումը։ Աշխատանքի ընդհատման և դպրոցական հասակի ծանրաբեռնվածության վերացման նշանակությունը։ Աշխատանքի ռեժիմի պլորելմը դպրոցում։

Երջապատի պայմանների սանիտարա-առողջապահական նըշանակությունը։ Կենցաղի կազմակերպման կանոնավորության նշանակությունն առողջապահության և աշխատունակության բարձրացման համար։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հատուկ դասագիրք մանկավարժական ուսումնարանների համար չկա։ Յեղած գրականությունից կարելի յէ հանձնարարեց միջնակարգ դպրոցի ուսման ուժերորդ տարվա դասադիրքը՝ կարանով։ — Մարդու անատոմիան և Փիզիոլոգիան. Պետհատ, Յերևան։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՍՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- 1) Под ред. Бабского. Физиология человека (учебник для педвузов, ч I, 1934 г. 2) Гебер. Курс физиологии. Госиздат. Москва, 1933 г. 3) Данилевский. Физиология человека.
- 4) Стерлинг. Основы физиологии человека, т. I и II. 5) Павлов. Лекции о работе больших полушарий головного мозга.
- 6) Орбели. Лекции по физиологии нервной системы. 7) Эванс. Современные успехи физиологии.

ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ^{*)}

ԲԱՅԱՏՐԱԿԱՆ

Մանկավարժական ուսումնարանների բնագիտության մեթոդիկայի նպատակն ե՝ սովորեցնել ուսանողներին մեթոդական ճիշտ ավանդել բնագիտության դասերը տարրական դպրոցի ընդուր դասարաններում, գործադրելով տարբեր մեթոդներ, լաբորատորիա, իլյուստրատիվ և այլն, ինչպես նաև կազմակերպել աշխատանքը կենդանի անկյունում ու դպրոցամերձ հողամասում, միաժամանակ տիրապետել խմբակային պարապմունքների կազմակերպման տեխնիկային։

Նախքան փորձնական մանկավարժական պրակտիկան սկսելը, տեսական դասընթացի պարապմունքներին հարկավոր ե անցնել՝ «Ծրագրի ուսումնասիրությունը» և «Աշխատանքի մեթոդներին առաջարկվող պահանջների առանձնահատկությունը բնագիտության դասերին» թեմաները։

Սրա հետևանքով ուսանողները պետք ե գիտենան՝ ա) ինչ նյութ և ինչ սիստեմով և ուսումնասիրվում տարրական դպրոցի յուրաքանչյուր դասարանում։

բ) ինչ կենդանի նյութ, աղյուսակներ, կոլեկցիաներ, սպիրացիալ պրեպարատներ, գործիքներ, դասադրքեր, սարքավորում և մեթոդական ձեռնարկներ պետք ե ունենա տարրական դպրոց։

գ) Յուրաքանչյուր դասարանի ուսուցման նյութի պլանն ըստ թեմաների և դասաժամերի։

^{*)} Ծրագրը սուսերենից թարգմանել ե Ա. Վարդապետյանը, հայերեն թարգմանությունը խմբագրել ե Ազ. Տեր-Պողոսյանը։

դ) Բնաղիտության տիպական դասի կառուցվածքի սխեման։
յէ) Բնդհանուր պահանջներ դասը տանելու, եքնկուրսիաներ
կատաղելու, կենդանի որյեկտներ, աղյուսակներ և փորձեր ցւե-
ցադրելու, լաբորատորական աշխատանքներ կիրառելու տեխնի-
կայի վերաբերյալ։

Այս հարցերի ուսումնասիրությունը պետք է կատարել վոչ
միայն լեկցիոն կարգով, անհրաժեշտ և տալ ուսանողներին գործ-
նական ունակություններ։ թե ինչպես պետք է վարվել գործիք-
ների, կենդանի որյեկտների ու դիտողական ուսուցման պարա-
գաների հետ։ Տնային աշխատանքների համար հնարավոր և ու-
սանողներին տալ, որինակ, այսպիսի առաջադրանքներ։

ա) Դուրս դրել ծրագրի բացատրադրից բնաղիտության
խնդիրները տարրական դպրոցում։

բ) Դուրս դրել հաջորդական կարգով յուրաքանչյուր դասա-
րանի ծրագրային հիմնական նյութերն ըստ բաժինների՝ «Ան-
կենդան բնություն», «Բույսեր», «Կենդանիներ», «Մարդ»։

դ) Կաղմել յուրաքանչյուր դասարանի համար անհրաժեշտ
սարքավորման ցուցակ, ըստ «Անկենդան բնություն», «Բույսեր»,
«Կենդանիներ», «Մարդ» թեմաների աշխատանքի և հավաքել
սարքավորման այս թեմաներից ամեն մեկի համար։

է) Ուսումնասիրել 3-րդ և 4-րդ դասարանների դասադրքերի
բովանդակությունը և նյութի հաջորդականությունն ու դասա-
վորել դասադրքերի նյութն ըստ դասերի։

յէ) Կաղմել առաջին, յերկրորդ, յերրորդ և չորրորդ դասա-
րանների համար վորեւե դասի որինակելի ու մանրամասն պլան և
ուսանողների առաջ ցույց տալ այդ դասի անցկացման մեթոդի-
կան։

Բնաղիտության մեթոդիկայի տեսական պարագմունքների
ընթացքում դասատուն ուսանողներին ծանոթացնում է յուրա-
քանչյուր դասարանի աշխանային առաջին և գարնանային վեր-
ջին թեմաների դասերի անցկացման մեթոդիկային։ Սա կարևոր է
նրա համար, քանի վոր դիտել այս աշխատանքը դպրոցում և
վորպես սրբակտիկան՝ այս թեմաներից փորձնական դասեր անց-
կացնել ուսանողներին, հարկ չի լինի։ Իրենց մանկավարժական
իսկական աշխատանքն ել նրանք դպրոցում սկսելու յեն հենց

այս թեմաներից, իսկ դարնանային թեմաները հարուստ են նյու-
թերով։

Ծրագրում ըստ այս հատվածի ցույց են տրված նաև դասե-
րի թեմաները յուրաքանչյուր դասարանի համար, վարոնց անց-
ման մեթոդիկան սովորաբար դժվարացնում է վոչ միայն ուսա-
նողներին, այլև և աշխատող մանկավարժներին։ Այսպիսին են ո-
րինակ 2-րդ դասարանի «Լճակ և գետեր» թեմայի դասերը (տես
2-րդ դասարանի 6, 7, 8, 9 թեմաները), խոշոր քաղաքների
դպրոցների մեծամասնության համար նաև կենդանի որյեկտների
և տպագրած դիտողական ուսուցման պարագաներից ցուցադրական
տիպիկ դասերը (տես 2-րդ դասարանի 4-րդ և 5-րդ թեմանե-
րը)։

3-րդ և 4-րդ դասարաններում այս նպատակով ել որինակելի
դասեր են նշված՝ հետեւյալ թեմաների վերաբերմաք՝ «Հուր»,
«ող», «Ելեկտրական յերեկությները բնության մեջ», «Մարդու
ներքին որդանները», «Եներվերն ու սրանց հատկությունները»,
«Մկաններն ու սրանց աշխատանքը», քանի վոր այս դասերին՝
3-րդ դասարանում՝ անկենդան բնության վերաբերյալ և 2-րդ
ու 4-րդ դասարանում բնական որյեկտների վերաբերյալ փորձե-
րի զեմոնստրացիայի մեթոդիկայի անցկացումը սովորաբար դըժ-
վարանում ե։ Այս նպատակով տարեսկզբին ուսանողները ներ-
դրավվում են կենդանի անկյուն կաղմելու և այստեղ փորձեր ու
դիտողություններ անելու պրակտիկ աշխատանքի մեջ։

Ծրագրում նշված թեմայի տիպական դասի կառուցվածքը և
անցկացման մեթոդիկան ուսանողներիս դասատուն պետք ե
ծանոթացնի ուսանողներին դիտելիքների այն ծավալին ու խորու-
թյանը, վորպիսին պետք է տալ տարրական դպրոցի աշակեր-
տությանը ավյալ հարցի վերաբերյալ, պետք է ծանոթացնի նաև
սարքավորմանը, վորը պետք է ոգտագործել որա համար։ Դասի
տիպական կառուցվածքին և աշխատանքի հաջորդական ընթաց-
քին, հարցերի գրման մեթոդիկայի և սարքավորումն ոգտագոր-
ծելու տեխնիկային։ Դասին ստացված դիտելիքների գնահատման
ձևերին, հաշվառման ձևերի և աշակերտության դիտելիքների
գնահատման չափանիշներին։ Սա հնարավորություն կտա ուսում-
նասիրել մեթոդների վերաբերող հարցերը վոչ թե կտրված, վե-

բացական վիճակում, այլ կապված դասի վորոշակի թեմային կոնկրետ բովանդակության հետ, վարդիսին յուրաքանչյուր գասարանի համար ցույց ե տրված այս ծրագրի վերջում։ Նախքան անընդհատ մանկավարժական պրակտիկային անցնելը թույլատրելի յէ յուրաքանչյուր դասարանում մեկ անդամ ցանկացաղ ուսանողներին զեկուցումով հանդես գալ այս կամ այն դասի անցկացման մեթոդիկայի վերաբերյալ, սակայն գարձնել տարրական դպրոցում տիպական դասերի կառուցվածքի և անցկացման մեթոդիկայի ուսումնասիրության սիստեմ՝ չի կարելի։ Հիմնականում այս փողը հատվածի աշխատանքը պետք ե տանի ինքը դասատուն։

Կենդանի անկյան և դպրոցամերձ տնտեսության մեջ տարվելիք աշխատանքների հարցն անհրաժեշտ ե ուսումնասիրել վոչ թե միայն տեսականորեն, այլ և գործնական աշխատանքների կատարումով։ Բոլոր ուսանողները պարտադիր կարգով պետք ե կատարեն տարրական դպրոցի յուրաքանչյուր դասարանի համար ծրագրով նշված կենդանի անկյան և դպրոցամերձ տնտեսության աշխատանքներն ուսումնական տարվա համապատասխան սեղոնին։

Կրկնության և հաշվառման դասերի անցկացման, դասի ժամանակ գրի առնելու և նկարելու, ինչպես և տան աշխատանքներին վերաբերող հարցերն անհրաժեշտ ե քննության առնել նախքան փորձնական և համատարած պրակտիկան։

Մանկավարժական պրակտիկային զուգահեռ ընթացող տեսական պարապմունքներին անհրաժեշտ ե վորպես իլլուստրացիա ովտագործել դպրոցներում տարվող մանկավարժական պրակտիկայի պրցեսում կուտակված նյութերի դրական ու բացասական մոմենտները։

Բնագիտության մեթոդիկայի գասընթացը նորմալ անցկացնելու համար անհրաժեշտ ե տարրական դպրոցի համար ձեռք բերել բնագիտական կարինետի սարքավորում, կուսողկոմարք 1936 ուսումնական տարվա տիպական ցուցակի համաձայն։

Բնագիտության մեթոդիկայի գասընթացին առաջադրված խնդիրները հաջողաւթյամբ լուծելու համար յուրաքանչյուր տեխնիկումում անհրաժեշտ ե ունենալ կենդանի անկյուն։ Կենդանի անկյունում պետք ե վորպես անհրաժեշտ մինիմում ունենալ կենդանի բնության հետեւյալ որյեկտները՝

1. Զբային բույսեր, գեկորատիվ բույսեր և սենյակի պարագաներում աճող բանջարանցի ու այգու մի քանի կուլտուրաներ (սոխ, ծաղկաբեր կուլտուրաներ, ճակնդեղի, գազարի, կազմամբի սերմնակալներ, բողկ, սալատ, լոբի, բակլա, մորի և այլն), վորոնք ցույց են տրված տարրական դպրոցի ծրագրի դյուզատանտեսական աշխատանքներին վերաբերող մասում։

2. Գորաներ, մողեսներ, բարտու, կրիա, մանր թռչուններ, չավեր, վողինի, սկյուռ, մկներ, ճագարներ։

Կենդանի անկյունում աշխատելու համար անհրաժեշտ ե ուսանողներին կազմակերպել բնագիտառության մեթոդիկայի դասընթացի հենց առաջին որը։ Մանկավարժական պրակտիկային անցնելու ժամանակ ուսանողները պետք ե կենդանի նյութի հետ վերաբերությունները ունենան։

Տարվա ընթացքում վորպես տնային պարտադիր աշխատանք ուսանողները պետք ե կոլլեկցիաներ պատրաստեն վշտաներեւ ու սաղարթակիոր ծառերի և թփերի ամառային, ձմեռային և գարնանային ճյուղերից, տերեներից, ծաղիկներից, պտուղներից ու սերմերից։ Պարնանը առաջին ծաղկող բույսերի նմուշներից, բանջարանցին կուլտուրաների և մոլախոտերի բուղողներից, բանջարանցի վնասատու միջատների կամ թե կուլտուրական բույսերի ամենատարծված վնասատուներից և այլն։

Պատրաստված կոլլեկցիաները գասատվի կողմից ստուգվելուց և զնահատվելուց հետո կարող են մնալ ուսանողների մոտ և տեխնիկումն ավարտելուց ծառայել վորպես տեղեկատու հետազում նրա կողմից ովտագործվել դպրոցում։

Այս գասընթացի համար վորպես հիմնական ձեռնարկներ կարող են լինել՝ Ս. Ա. Պավլովիչ, „Практика преподавания естествознания в начальной школе“ Учпедгиз, 1936 թ. հրատարակություն և Կ. П. Ягодовский „Практические занятия по естествознанию в начальной школе“ Учпедгиз, 1936 г. Կարող են ովտագործվել Վ. Ф. Шалаев „Методические указания по обучению естествознанию в начальной школе, Ч. пр. п. նեֆ, 1934 թ., Н. А. Горбунов“, Уроки естествознания в начальной школе (практическое руководство для учителя) 1935 թ. Աւո. մանկ. հրատ. Մուկվա և „Методический материал для учителя начальной школы“ 1, 2, 3, 4, գասարանների համար

1934/35թ. առաջին և յերկրորդ կիսամյակների համար: ՀԱԿ
Պեդագոգիկ ՎԿԻՊ, издав. Наркомпросом РСФСР.

Նշված դրականության մեջ ուսուցչի համար տեղեկատվական բնույթի հանձնարարելի ձեռնարկների ցուցակներ կան:

Ծ Բ Ա Գ Ի Ր

I. ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՅԻ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(4 ժամ)

1. Բնագիտության խնդիրներն ու նպատակները տարրական դպրոցում:

2. Բնագիտության կայուն ծրագրերի կառուցման սկզբունքները տարրական դպրոցում:

ա) Բնության և շրջապատող կյանքի յերեվույթների վերաբերյալ պատկերացումների ու համացողությունների կուտակում:

բ) Տարրական, սակայն գիտական սիստեմականություն:

գ) Ուսումնասիրվող հարցերի լուսաբանման հակակրոնական բնույթը:

դ) Գիտության լայն ողտագործման մոմենտների ընդէծումը սոցիալիստական շինարարության համար:

յի) Ուսումնասիրվելիք նյութերի մատչելիությունը աշակերտության տարիքին:

յի) Նյութի ուսումնասիրությունը բնագիտության համար բնորոշ զանազան մեթոդներով:

3. Նյութի ուսումնասիրության սիստեմն առանձին թեմաների սահմաններում ըստ ուսման տարիների:

1-ին դասարան.— Տարվա սեպտեմբերը, յեղանակի վոփոխությունները, բույսի, կենդանու և մարգու կյանքում կատարվող վոփոխությունները ցայտուն կերպով բնութագրող և սրանց միջև պարզադույն կապն ու վոփակարձ կախումը յերեան հանող որպահագույն կապն ու վոփակարձ կախումը յերեան հանող որպահական և անորդանական բնության յերեվույթների կուտակումը և ուսումնասիրությունը:

2-րդ դասարան. Բույսերի և կենդանիների բիոլոգիական առանձնահատկությունների և արտաքին տեսքի ուսումնասիրությունն ըստ բնական խմբագորումների, նրանց և մարգու միջև թյունն ըստ բնական առաջարկումների, կազմակերպությունների կամաց դույնով պարզագույն կապի յերեան հանելը:

3-րդ դասարան. Կոնկրետացնել և ճշտել աշակերտների պատկերացումներն անորդանական բնության հիմնական որոշեկտներն (յերկիրը և նրա հանածոները, ջուրը, ողջը, ելեկտրականությունը) արտաքին տեսքի, կազմության, հատկությունների և մարդու համար ունեցած նշանակության մասին:

4-րդ դասարան. Սիստեմի բերել աշակերտների պատկերացումները կենդանիների մասին և ուսումնասիրել նրանց բիոլոգիական առանձնահատկությունները, նրանց բնակության միջավայրի կապակցությամբ: Մարդու անատոմիայի և ֆիզիոլոգիայի հիմունքների տարրական ուսումնասիրությունը՝ կապված սանհատական-առողջապահական պահանջների հետ, վոր արվում են աշակերտների վարքի նկատմամբ՝ դասարանում և տանը:

II. ԲՆԱԳԻՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԱՍԼ ՅԵԿ ՆՐԱ ՎՐԱ ՍՇԽԱՏԵԼՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ (50 ժամ)

1. Տարրական դպրոցի բնագիտության դասերի աշխատանիքի մեջ բաղներին առաջադրվող պահանջների առանձնահատկությունները:

Բնության ուսումնասիրության մեթոդների ընտրության վրա ազդող բնագիտական սպեցիֆիկ առանձնահատկությունները:

Առարկայականության և դիտողականության նշանակությունը՝ յերեխաների կողմից բնագիտական հիմնական հասկացությունների յուրացման պրոցեսում: Ուսումնական աշխատանքի կապակցությամբ կատարվող նատուրալիստական աշխատանքի և գլոբոցամերձ տնտեսության մեջ տարվող աշխատանքների նշանակությունը: Աշխատանքի այն հիմնական մեթոդների համար, վոր առանձնահատուկ են բնությունն ուսումնասիրելու դասերի համար. դաս կենդանի որյեկտոների և փորձի ցուցադրումով. որյեկտի հերձումը, կինո-դաս, դաս-եքսկուրսիա, գյուղատեսական աշխատանքի դաս. լաբորատոր դաս, դաս՝ տպագիր դիտողական սպարագաների, բնագիտական կոլեկցիաների ուղարկումով կոնկրետ թեմաների որինակում:

Մեթոդի ընարկության նախադրյալները՝ ուսումնասիրվող նյութի բնույթը, բնական շրջապատի պայմանները, տվյալ հար-

Ցի ուսումնասիրությանը հատկացված ժամանակը։ Դասագիրքը, նկարներ և գրանցումներ կատարելը բնադիտության դասին յուրաքանչյուր դասարանում։ Տան համար հանձնաբարված աշխատանքը և նրա ստուգման մեթոդիկան։

Տարեկ տիպի դասերին ինքնուրույն աշխատանքի ելեմենտներ ժացնելը։

ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ ՈՒՍՈՒՅՉՅԻ ՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գիտենալ կենդանի որյուկտներն ըստ ապարական դպրոցի ծրագրի ու սրանց մասին յեղած դրականությունը։ Գիտենալ սարքավորումն ու դասադրքերը։ Լարորատոր և եքսկուրսիոն կարգի որակտիկ ունակություններ ունենալ։ Կարողանալ պատրաստել հերթարիում և այլն այնպիսի ուսումնական պիտույքներ ու լաբորատորական սարքավորում, վոր զանազան չիմիարկներ ու կազմակերպություններն են մատակարարում ամառվա ընթացքում, աշնանային-ձմեռային սլարապմունքների համար զանազան դասարանների թեմաների համաձայն։ Գալառադիտական նյութ համարելու անհրաժեշտությունը։ Ծանոթություն տարեկան ուսումնական պլանը կազմելու սկզբունքների հետ։ Ծանոթություն դպրոցում բնության ուսումնասիրության ծրագրերի ու մեթոդների հարցերով դրազվող մեթոդական հիմնարկների հետ։

ՈՐԻՆԱԿԵԼԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Այն դասերի, վորոնց անցկացման մեթոդիկան ուսանողների ուսումնասիրում են դպրոցում, տեսական պարապմունքների կարգվ։

1. ԴԱՍԱՐԱՐՄԱՆ (12 Ժամ)

1. Առաջին դաս՝ զրույց «Աշուն» թեմայի վերաբերյալ (1 Ժամ)։

2. Դաս՝ եքսկուրսիա դեպքի աշխանային բնությունը (2 Ժամ)։

3. Եքսկուրսիայից բերված նյութերի լաբորատոր ուսումնասիրությունը (2 Ժամ)։

4. Յերեխաների կազմակերպումը բնության փոփոխությունները դիտելու համար (1 Ժամ)։

5. Դիտողությունների հանրագումարի բերելն ըստ բնության որագրի, վորոշ ժամանակացրչանի ընդգրկումով (1 Ժամ)։

6. Զրույց «Թուչունների չուն» թեմայի վերաբերյալ (1 Ժամ)։

7. Զրույց «Ինչպես և մարդը պատրաստվում ձմռան համար» թեմայի վերաբերյալ (1 Ժամ)։

8. Առաջին դասարանի համար նատուրալիստական աշխատանքի կազմակերպումը բնության մեջ և կենդանի անկյունում (բովանդակությունը և անցկացման մեթոդիկան) (1 Ժամ)։

9. Առաջին դասարանի աշակերտության գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպումը (բովանդակությունը և սրանց անցկացման մեթոդիկան) (2 Ժամ)։

10. Կրկնություն և տարեկան հաշվառում 1-ին դասարանում (1 Ժամ)։

II. ԴԱՍԱՐԱՐՄԱՆ (12 Ժամ)

1. Առաջին դաս՝ «Բանջարանոցն աշնանը» թեման։

2. Եքսկուրսիա բանջարանոցում։

3. Եքսկուրսիայի տպակորությունների ամրացումը (կոլեկցիաների պատրաստում, նկարահանում, զբանցում)։

4. Դաս՝ «Կատուն—ընտանի կենդանի յե» թեմայով (դասի մեթոդիկան, աղյուսակների ցուցադրումով)։

5. Դաս՝ «Կատվի վայրի ազդակիցները» թեմայով (դասի մեթոդիկան, աղյուսակների ցուցադրումով)։

6. Առաջին դասը՝ «Լճակ և զետ» թեմայով։

7. Դաս՝ «Ջրամբարներում ապրող կենդանիները» թեմայով (կենդանի ձուկը, գորտը, խխունջը, ջրային միջատները)։

8. Դաս՝ «Զրամբարներում աճող բույսերը» թեմայով (դասի մեթոդիկան՝ ջրային կենդանի բույսերի ցուցադրումով):

9. Դաս՝ Զրամբարներում բնակվողների կյանքի դիտողության կազմակերպումը կենդանի անկյունում:

10. Տանը կատարելու առաջադրանքներ, գրանցումներ և նկարելու աշխատանքն ըստ 2-րդ դասարանի ծրագրի (դեկավարելու մեթոդը և ստուգումը):

11. Գյուղատնտեսական աշխատանքների կատարման դասեր, ըստ 2-րդ դասարանի ծրագրի (բույնդակությունը և սրանց անցկացման մեթոդիկան):

12. Տարվա ընթացքում անցածի կրկնություն և հաշվառման դաս, ըստ 2-րդ դասարանի ծրագրի:

III. ԴԱՍԱՐԱՐՄԱՆ (14 ժամ)

1. Առաջին դաս՝ «Հողը և ոգտակար հանածոները» թեմայով:

2. Եքսկուրսիա հողի շերտերը դիտելու նպատակով:

3. Եքսկուրսիայից բերված նյութերի լաբորատոր ուսումնասիրությունը:

4. Կինո-դաս. «Ուստակար հանածոները և սրանց նշանակությունը անտեսության մեջ»: Դասի մեթոդիկան՝ սոցշինարարության նյութերի ընդգրկումով:

5. Մետաղների հատկությունների լաբորատոր ուսումնասիրությունը:

6. Դեմոնստրատիվ դաս «Զրի շրջանառությունը ընության մեջ»:

7. Զրի հեղուկ վիճակի հատկությունների լաբորատոր ուսումնասիրությունը:

8. Դեմոնստրատիվ դաս՝ «Շողեմեքենա»:

9. Դեմոնստրատիվ դաս՝ «Զերմաչափի կազմությունը»:

10. Դեմոնստրատիվ դաս՝ «Ողի հատկությունները»:

11. Դեմոնստրատիվ դաս՝ «Ելեկտրական յերեվույթները ընության մեջ»: Դասի մեթոդիկան հակակրոնական դաստիարակության մոմենտներով:

12. Նկար, գրանցում և տանը կատարելու առաջադրանքներ 3-րդ դասարանի դասերին:

Սրանց դեկավարման մեթոդիկան և ստուգումը:

13. Նատուրալիստական աշխատանքներ 3-րդ դասարանի աշակերտության համար:

14. Տարեկան կրկնությունների և հաշվառման դասեր 3-րդ դասարանում:

Աշակերտության դիտելիքների զնահատման չափանիշները:

IV. ԴԱՍԱՐԱՐՄԱՆ (9 ժամ)

1. Առաջին դաս՝ «Կենդանիների կյանքը» թեմայով:

2. Անվողնաշար կենդանիների ընդհանուր հատկանիշների ուսումնասիրության դաս. (դիտումներ կենդանի որյեկտների և գնության մեջ հարաբերական նպատակահարմարության յերեւույթների բացատրության մեթոդիկան):

3. Վողնաշարավոր կենդանիների ընդհանուր հատկանիշների ուսումնասիրությունը:

4. Կինո-դաս՝ «Տաք և ցուրտ յերկրների կենդանիները»:

5. Մարդու և կենդանիների ներքին որդանների դասավարության մեջ յեղած նմանությունների ուսումնասիրությունը (հերձառում): Մարդու կենդանական ծագման հարցի բացատրության մեթոդիկան:

6. Ներվերի հատկությունների ուսումնասիրությունը (բնական պրեպարատի ցուցադրում): Մարդու և կենդանիների բարձր ներվային գործունեյության վերաբերող հարցերի հակակրոնական բացատրության մեթոդիկան:

7. Նկարներ, գրանցումներ, տանը կատարելիք աշխատանքների առաջադրանքներ 4-րդ դասարանում: Մրանց դեկավարությունը և ստուգումը:

8. Կրկնության դասեր և քննություններին նախապարագագելը 4-րդ դասարանում:

9. Քննությունների կատարման մեթոդիկան 4-րդ դասարանում: Աշակերտության դիտելիքների զնահատման չափանիշները:

Ց Ա Ն Կ

	Եջ
1. ԿԵՆԴՐԱՆԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ	5
2. ԲԱԼԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ	15
3. ԵՎՈԼՈՎԵՐԻՈՆ ՈՒՍՏՈՒՆՔ	30
4. Մարդու անատոմիա և Փիզիոլոգիա	42
5. Բնադիտության մեթոդներ	53

Տեխ. լոմբ՝ ի. Վարդանյան
Սրբադրիչներ՝ Հ. Գոլովսանյան և Հ. Մանուկյան

Տրված է արտադրության 26 մայիսի, 1937 թ.
Ստորագրված է տպելու 27 հունիսի, 1937 թ.
Գլամիլիսի լիազոր Պ-4148, Պատվեր 775, Հրատկ. 4110

Տերաժ 2000

Պետհրատի տպաքան, օն. ան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0937833

2 ОКТ. 1957

ԳԻՒԸ 1 Ո. 50 4.

461

11

28576

Программы
Педагогических школ. часть III-я
Гиз Арм. ССР. Ереван. 1937 год.